# Nokia 2710 Օգտագործողի ուղեցույց

Հրատարակություն 3

# Բովանդակություն


Անվտանգություն 4

Աջակցություն 5

Սկսում ենք 5
SIM քարտ և մարտկոց մտցնելը 5
microSD քարտ մտցնելը 5
Հեռացրեք microSD քարտը 6
Մարտկոցի լիցքավորումը 6
GSM ալեհավաք 7
Ականջակալ 8
USB տվյալների կաբել միացնելը 8
Մագնիսներ և մագնիսական դաշտեր 8
Ստեղներ և մասեր 9
Մուտքի կոդեր 10
Միացնելը կամ անջատելը 10
Հիմնական էկրան 10
Ստեղնախմբի կողպեք 11
Սարքն առանց SIM քարտի օգտագործելը 11
Հետին պլանում գործող ծրագրեր 11

Կանչեր 11
Զանգահարելը և զանգին պատասխանելը 11
Բարձրախոս 12
Զանգահարելու դյուրանցումներ 12

Տեքստ մուտքագրելը 12
Տեքստային ռեժիմներ 12
Տեքստերի ավանդական ներմուծում 13
Տեքստերի կանխատեսող ներմուծում 13

Նավարկում ընտրացանկերում 13

Հաղորդագրությունների փոխանակում 14
Տեքստային և մուլտիմեդիա հաղորդագրություններ 14
Շտապ հաղորդագրություններ 15
Nokia Xpress ձայնային հաղորդագրություններ 15
Nokia Փոստ 16
Ձայնային հաղորդագրություններ 17
Հաղորդագրության պարամետրեր 17

Կոնտակտներ 17

Կանչերի գրանցամատյան 18

Պարամետրեր 18
Պրոֆիլներ 18
Հնչերանգներ 18
Ցուցասարք 19
Օր և ժամ 19
Դյուրանցումներ 19
Համաժամացում և կրկնօրինակում 19
Միացնելիություն 19
Կանչ և հեռախոս 21
Լրասարքեր 21
Կազմաձևում 21
Գործարանային պարամետրերը վերականգնելը 22

Օպերատորի ընտրացանկ 22

Պատկերասրահ 22

Ծրագրեր 22
Զարթուցիչ 22
Օրացույց և անելիքների ցանկ 23
Հավելյալ 23
Խցիկ և վիդեո 24
FM ռադիո 24
Ձայնագրանցիչ 25
Մեդիա նվագարկիչ 25

Քարտեզներ 26
Քարտեզների մասին 26
Ներածություն 27
Դեպի նպատակակետը նավարկելը 28

Համացանց կամ Ինտերնետ 31
Համացանցային ծառայությանը միանալը 31

SIM ծառայություններ 31

Կանաչ խորհուրդներ 32
Խնայեք էներգիան 32
Վերամշակում 32
Իմացեք ավելին 32

Տեղեկություններ արտադրանքի և շահագործման անվտանգության մասին 32

Ցուցիչ 41

# Անվտանգություն

Ընթերցեք այս պարզ ցուցումները: Դրանց չհետևելը կարող է վտանգավոր կամ անօրինական լինել: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք օգտագործողի ուղեցույցն ամբողջությամբ:

## ՍԱՐՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՄԻԱՑՈՒՄ



Սարքը մի միացրեք այն դեպքերում, երբ բջջային հեռախոսի օգտագործումը արգելված է, կամ եթե այն կարող է ռադիոխանգարում կամ վտանգ առաջացնել:

## ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



Հետևեք տեղական բոլոր օրենքներին: Ավտոմեքենա վարելիս ձեռքերը միշտ ազատ պահեք՝ այն ղեկավարելու համար: Ավտոմեքենա վարելիս Ձեր առաջնային մտահոգությունը պետք է լինի ճանապարհային անվտանգությունը:

## ՌԱԴԻՈԽԱՆԳԱՐՈՒՄ



Բոլոր անլար սարքերը կարող են ենթարկվել ռադիոխանգարումների ազդեցությանը, ինչն իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ դրանց աշխատանքի վրա:

## ԱՆՋԱՏԵԼ ՍԱՐՔԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ



Պահպանել բոլոր սահմանափակումները: Սարքն անջատեք օդանավերում, բժշկական սարքավորումների, վառելանյութերի, քիմիական նյութերի կամ պայթեցման աշխատանքների մերձակայքում:

## ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ



Այս սարքի տեղադրումը և նորոգումը կարող են կատարվել միայն որակյալ մասնագետների կողմից:

## ԼՐԱՍԱՐՔԵՐ ԵՎ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ



Օգտագործեք միայն թույլատրված լրասարքեր և մարտկոցներ: Մի միացրեք անհամատեղելի սարքեր:

## ՋՐԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ



Ձեր սարքը ջրակայուն չէ. այն չոր պահեք:

# Աջակցություն

Եթե ցանկանում եք ավելին իմանալ այն մասին, թե ինչպես օգտագործել արտադրանքը, կամ չգիտեք, թե ինչպես պետք է գործի Ձեր սարքը, այցելեք www.nokia.com/support կամ օգտագործելով բջջային սարք՝ nokia.mobi/support:

Եթե դա չի լուծել Ձեր խնդիրը, կատարեք հետևյալ գործողությունները.

- Վերասկզբնաբեռնեք ձեր սարքը: Անջատեք սարքը և հանեք մարտկոցը: Մոտ մեկ րոպե հետո փոխեք մարտկոցը և սարքը միացրեք:
- Սկզբնական գործարանային պարամետրերը վերականգնելը:
- Թարմացրեք Ձեր սարքի ծրագրակազմը:

Եթե խնդիրը մնում է չլուծված, նորոգման տարբերակների համար դիմեք Nokia-ին: Անցեք www.nokia.com/repair: Նախքան սարքը նորոգման ուղարկելը միշտ կրկնօրինակեք ձեր սարքում առկա տվյալները:

# Սկսում ենք

## SIM քարտ և մարտկոց մտցնելը

Անվտանգ հանում: Մարտկոցը հանելուց առաջ սարքը միշտ անջատեք և լիցքավորիչից զատեք:

SIM քարտը և իր հպակները կարող են հեշտությամբ վնասվել քերծվածքներից կամ ճկումից, ուստի անհրաժեշտ է զգույշ լինել քարտը գործածելիս, մտցնելիս կամ հեռացնելիս:



1. Սահեցրեք հետևի կափարիչը դեպի ներքև և հանեք այն (1):
2. Հեռացրեք մարտկոցը (2):
3. Մտցրեք SIM քարտը: Համոզվեք, որ կոնտակտային մակերեսը ուղղված է դեպի ներքև և SIM քարտի թեք կտրված անկյունն ուղղված է դեպի սարքի ներքևի մասը (3, 4, 5):
4. Փոխեք մարտկոցը և փակեք հետևի կափարիչը (6, 7):

## microSD քարտ մտցնելը

Օգտագործեք միայն Nokia-ի կողմից այս սարքի համար թույլատրված համատեղելի microSD քարտեր: Nokia-ն օգտագործում է հիշաքարտերի համար հաստատված արդյունաբերական ստանդարտներ, բայց հնարավոր է, որ որոշ ապրանքանշաններ լիովին համատեղելի չլինեն այս սարքի հետ: Անհամատեղելի քարտերը կարող են վնասել քարտն ու սարքը և փչացնել քարտի վրա պահպանված տվյալները:

Ձեր հեռախոսը ապահովում է մինչև 16 ԳԲ հիշողության ծավալ ունեցող microSD քարտեր:

Սարքի հետ կարող է տրամադրվել համատեղելի հիշաքարտ, որը կարող է արդեն մտցված լինել սարքի մեջ: Հակառակ դեպքում արեք հետևյալը՝




1 Բացեք հիշողության քարտի բնիկի կափարիչը:
2 Տեղադրեք քարտը հիշողության քարտի բնիկի մեջ այնպես, որ կոնտակտային մակերևույթը ուղղված լինի դեպի վերև, և սեղմեք քարտը, մինչև այն խրվի իր տեղը:
3 Փակեք հիշողության քարտի բնիկի կափարիչը:

## Հեռացրեք microSD քարտը

**Կարևոր է.** Հիշողության քարտը չի կարելի հանել գործողության ընթացքում: Քարտը հանելը կարող է վնասել հիշաքարտն ու սարքը և փչացնել քարտի վրա պահպանված տվյալները:

Հեռախոսի գործարկման ընթացքում կարող եք առանց սարքն անջատելու հեռացնել կամ փոխարինել հիշողության քարտը, բայց մինչ այդ հարկավոր է համոզվել, որ տվյալ պահին ոչ մի ծրագիր հիշողության քարտից չի օգտվում:




## Մարտկոցի լիցքավորումը

Մարտկոցը մասամբ լիցքավորվել է գործարանում: Եթե սարքը ցույց է տալիս, որ մարտկոցը լիցքաթափված է, ապա կատարեք հետևյալ քայլերը՝



1 Լիցքավորիչը միացնել պատի վարդակից:

2 Լիցքավորիչը միացրեք սարքին:

3 Երբ սարքը ցույց է տալիս, որ մարտկոցը լրիվ լիցքավորված է, լիցքավորիչը նախ անջատեք սարքից և ապա՝ պատի վարդակից:

Մարտկոցը լիցքավորելու համար որևէ հատուկ ժամանակ սահմանված չէ, իսկ լիցքավորման ժամանակ կարող եք օգտվել սարքից: Եթե մարտկոցը ամբողջովին լիցքաթափված է, կարող է մի քանի րոպե պահանջվել, մինչև լիցքավորման նշանը հայտնվի ցուցասարքին կամ հնարավոր լինի կանչեր կատարել:

## GSM ալեհավաք



Ձեր սարքը կարող է ներքին և արտաքին ալեհավաքներ ունենալ: Խուսափեք հաղորդման կամ ընդունման ընթացքում առանց անհրաժեշտության դիպչել ալեհավաքի տիրույթին: Ալեհավաքների հետ հպումը ազդում է հաղորդակցության որակի վրա, ինչը կարող է ավելի շատ սնուցում պահանջել շահագործման ընթացքում և նվազեցնել մարտկոցի ծառայության ժամկետը:

Նկարում պատկերված է ալեհավաքի զբաղեցրած տարածքը, որը նշված է մոխրագույնով:

## Ականջակալ

**Ուշադրություն.**
Գլխային հեռախոս օգտագործելը կարող է սահմանափակել արտաքին ձայներ լսելու Ձեր ունակությունը: Գլխային հեռախոսից մի օգտվեք այն դեպքերում, երբ դա կարող է սպառնալիք ստեղծել Ձեր անվտանգության համար:

Սույն սարքի հետ օգտագործելու համար Nokia ԱՎ միակցիչին Nokia-ի կողմից չհաստատագրված այլ արտաքին սարք կամ գլխային հեռախոս միացնելիս հատուկ ուշադրություն դարձրեք ձայնի ուժգնությանը:

Մի միացրեք ելքային ազդանշաններ ստեղծող արտադրատեսակներ, քանի որ դա կարող է վնաս պատճառել սարքին: Nokia ԱՎ միակցիչին լարման որևէ աղբյուր մի միացրեք:



## USB տվյալների կաբել միացնելը

USB միակցիչին միացնել համատեղելի USB տվյալների կաբել: Հնարավոր է, որ USB տվյալների կաբել անհրաժեշտ լինի գնել առանձին:



USB պարամետրերը փոփոխելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Միացնելիությն > USB տվյալ. կաբել և ցանկալի ռեժիմը:

## Մագնիսներ և մագնիսական դաշտեր

Ձեր սարքը հեռու պահեք մագնիսներից և մագնիսական դաշտերից:

## Ստեղներ և մասեր




1 Ականջակալ
2 Ցուցասարf
3 Ընտրության ստեղներ
4 Navi™ ստեղն (ոլորման ստեղն)
5 Կանչի ստեղն
6 Ստեղնախումբ
7 Քարտեզներ ստեղն
8 Վերջի/Սնուցման ստեղն
9 Միկրոֆոն




10 Խցիկի ոսպնյակներ
11 Բարձրախոս
12 Դաստակի փոկանցf
13 Գլխային հեռախոսի միակցիչ/Nokia ԱՎ միակցիչ (3.5 մմ)
14 Լիցfավորիչի միակցիչ
15 Սևեռման ստեղն
16 Միկրո USB կաբելի միակցիչ

17 Հիշողության քարտի բնիկ

## Մուտքի կոդեր

Անվտանգության կոդը օգնում է պաշտպանել սարքը չլիազորված գործածումից: Ընթացիկ կոդը 12345 է: Կարող եք ստեղծել և փոխել ծածկագիրը, ինչպես նաև կանխադրել, որ սարքը կատարի կոդի հարցում: Գաղտնի պահեք կոդը, պահեք այն ապահով վայրում՝ սարքից առանձին: Եթե մոռանաք կոդը սարքը արգելափակված լինելու ժամանակ, սարքն անհրաժեշտ կլինի ուղարկել սպասարկման: Կարող է գանձվել լրացուցիչ վարձ, իսկ սարքում պարունակվող անձնական բոլոր տվյալները կարող են ջնջվել: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Nokia Care կետ կամ սարքի վաճառքի գործակալին:

SIM քարտի հետ տրամադրված PIN կոդը քարտը պաշտպանում է չլիազորված գործածումից: Որոշ SIM քարտերի հետ տրամադրված PIN2 կոդ է պահանջվում՝ որոշակի ծառայություններից օգտվել կարողանալու համար: Եթե PIN կամ PIN2 կոդը երեք անգամ անընդմեջ սխալ եք մուտքագրեք, ձեզնից կպահանջվի PUK կամ PUK2 կոդը: Եթե այդ կոդերը չունեք, դիմեք ձեր ծառայության մատակարարին:

Մոդուլի PIN է պահանջվում ձեր SIM քարտի անվտանգության մոդուլում պահվող տվյալներ մուտք գործելու համար: Կարող է ստորագրող PIN պահանջվել թվային ստորագրության համար: Արգելման նշանաբառ է պահանջվում կանչի արգելափակման ծառայությունից օգտվելիս:

Նախադրելու համար, թե ինչպես է ձեր սարքն օգտագործում մուտքի կոդերն ու անվտանգության պարամետրերը, ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Անվտանգթն**:

## Միացնելը կամ անջատելը

Սեղմել և պահել սնուցման ստեղնը:

## Հիմնական էկրան




1 Ցանցային ազդանշանի ուժգնություն
2 Մարտկոցի լիցքավորման կարգավիճակ
3 Ցուցիչներ
4 Ցանցի անունը կամ օպերատորի պատկերանիշը
5 Ժամացույց
6 Ամսաթիվ (եթե ակտիվացված է հիմնական էկրանի ռեժիմը)

7 Ցուցասարք
8 Ընտրության ձախ ստեղնի գործառույթ
9 Ոլորման ստեղնի գործառույթ
10 Ընտրության աջ ստեղնի գործառույթ

## Ստեղնախմբի կողպեք

**Ստեղնախումբը կողպելը**
Ընտրել Ընտցնկ և սեղմել * 2.5 վայրկյան:

**Ստեղնախումբը բացելը**
Ընտրել Բացել և սեղմել * 1.5 վայրկյան: Պահանջի դեպքում մուտքագրեք արգելափակման կոդը:

**Կողպված ստեղնախմբի դեպքում կանչին պատասխանելը**
Սեղմել կանչի ստեղնը: Կանչ ավարտելու կամ մերժելու դեպքում ստեղնախումբն ինքնաբերաբար կողպվում է:

**Ստեղնախմբի ինքնաբերական կողպում նախադրելը**
Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Հեռախոս > Ավտմտ ստղնկղպ > Միացնել, և նախադրել այն ժամանակամիջոցը, որից հետո ստեղնախումբը կողպվում է:

Ձեր սարքի մեջ ծրագրված արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարով զանգահարելը կարող է հնարավոր լինել, նույնիսկ երբ սարքը կամ ստեղնախումբը կողպված է:

## Սարքն առանց SIM քարտի օգտագործելը

Ձեր սարքի որոշ գործառույթներ, օրինակ՝ խաղերը, կարող են օգտագործվել առանց SIM քարտ տեղադրելու: Օֆլայն պրոֆիլում անհասանելի հնարավորությունները հնարավոր չէ ընտրել ընտրացանկերից:

## Հետին պլանում գործող ծրագրեր

Չանջատված և հետին պլանում աշխատելու թողնված ծրագրերը ավելի շատ սնուցում են պահանջում մարտկոցից և նվազեցնում են մարտկոցի շահագործման ժամանակը:

Հետին պլանում սովորաբար գործող ծրագրերից են, օրինակ, Ռադիո և երաժշտության նվագարկչի ծրագրերը:

# Կանչեր

## Զանգահարելը և զանգին պատասխանելը

**Կանչ կատարելը**
Հավաքել հեռախոսահամարը` անհրաժեշտության դեպքում ներառելով երկրի կոդն ու միջքաղաքային կոդը, և սեղմել կանչի ստեղնը:

**Մտից կանչին պատասխանելը**

Սեղմել կանչի ստեղնը:

**Կանչ մերժելը**

Սեղմել ավարտի ստեղնը:

**Ձայնի ուժգնությունը կարգավորելը**

Հեռախոսականչի ընթացքում ոլորեք վեր կամ վար:

### Բարձրախոս

Առկայության դեպքում կարող եք ընտրել Բրձրխս կամ Նորմալ՝ խոսակցության ընթացքում բարձրախոսը կամ ականջակալը օգտագործելու նպատակով:

**Ուշադրություն.**
Տևականորեն բարձր ձայն լսելը կարող է վնասել Ձեր լսողությունը: Երաժշտությունը լսեք չափավոր բարձրությամբ և բարձրախոսից օգտվելիս սարքն ականջին մոտ մի պահեք:

### Զանգահարելու դյուրանցումներ

**Հեռախոսահամարին թվային ստեղն վերագրելը**

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Լրացուցիչ > Արագ հավաքում, ոլորել դեպի հարկավոր թիվը (2-9) և ընտրել Վերագր: Մուտքագրել ցանկալի հեռախոսահամարը կամ ընտրել Որոնել և պահպանված կոնտակտը:

**Արագ համարահավաքն ակտիվացնելը**

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Կանչ > Արագ համարհավաք > Միացնել:

**Կանչի կատարում արագ համարահավաքի միջոցով**

Հիմնական էկրանի ռեժիմում սեղմել և պահել հարկավոր թվային ստեղնը:

## Տեքստ մուտքագրելը

### Տեքստային ռեժիմներ

Տեքստ մուտքագրելու համար (օրինակ՝ հաղորդագրություններ գրելիս) կարող եք օգտվել տեքստերի ավանդական կամ կանխատեսող ներմուծման եղանակներից:

Տեքստ գրելիս սեղմեք և պահեք Ընտրք՝ տեքստերի ավանդական ներմուծման եղանակից, որը նշված է պատկերակով, պատկերակով նշված կանխատեսող ներմուծման եղանակին անցնելու համար, և՝ հակառակը: Ոչ բոլոր լեզուներն են կանխատեսող ներմուծման եղանակով ապահովված:

Տառաչափերը նշված են Abc, abc և ABC պատկերակներով:

Տառաշարը փոխելու համար սեղմեք #: Տառային ռեժիմից 123 պատկերակով նշված թվային ռեժիմին անցնելու համար սեղմեք ու պահեք # և ընտրեք Թվային ռեժիմ: Թվային ռեժիմից տառային ռեժիմին անցնելու համար սեղմեք ու պահեք #:

Գրելու լեզուն նախադրելու համար ընտրեք Ընտրք > Գրելու լեզուն.

### Տեքստերի ավանդական ներմուծում

Մի քանի անգամ սեղմեք 2-9 թվային ստեղներից որևէ մեկը, մինչև հայտնվի համապատասխան գրանշանը: Գրանշանների առկայությունը կախված է գրելու ընտրված լեզվից:

Եթե Ձեր ուզած հաջորդ տառը գտնվում է այն նույն ստեղնի վրա, ինչ նախորդը, սպասեք, մինչև հայտնվի շարժագիծը, այնուհետև մուտքագրեք տառը:

Առավել հաճախակի օգտագործվող կետադրական նշաններից և հատուկ նիշերից օգտվելու համար հարկավոր անգամ սեղմեք 1: Հատուկ նիշերի ցանկ մուտք գործելու համար սեղմեք *: Բացատ ավելացնելու համար սեղմեք 0:

### Տեքստերի կանխատեսող ներմուծում

Տեքստերի կանխատեսող ներմուծումը հիմնված է ներկառուցված բառարանի վրա, որում կարող եք նաև նոր բառեր ավելացնել:

1 Սկսեք բառ գրել՝ գործածելով 2-9 ստեղները: Յուրաքանչյուր ստեղն միայն մեկ անգամ սեղմել մեկ տառ գրելու համար:

2 Բառը հաստատելու համար ոլորեք դեպի աջ կամ ավելացրեք բացատ:

- Եթե բառը ճիշտ չէ, մի քանի անգամ սեղմեք * և բառն ընտրեք ցուցակից:
- Եթե բառից հետո արտացոլվել է ? սիմվոլը, ապա տվյալ բառը, որը դուք մտադիր էիք գրել, բառարանում չկա: Բառարանում բառ ավելացնելու համար ընտրեք Հեգել: Մուտքագրեք բառը՝ օգտվելով տեքստերի ավանդական ներմուծման եղանակից, և ընտրեք Պահպ:
- Բաղադրյալ բառեր գրելու համար մուտքագրեք բառի առաջին մասը և այն հաստատելու համար ոլորեք դեպի աջ: Գրեք բառի վերջին մասը և հաստատեք բառը:

3 Սկսեք գրել հաջորդ բառը:

## Նավարկում ընտրացանկերում

Սարքի գործառույթները խմբավորված են ընտրացանկերում: Ընտրացանկերի ոչ բոլոր գործառույթները կամ տարրերն են այստեղ նկարագրված:

Հիմնական էկրանից ընտրել Ընտցնկ և ցանկալի ընտրացանկը կամ ենթացանկը:

**Ելք ընտրացանկի ներկա մակարդակից**

Ընտրել Ելք կամ Հետ:

**Հիմնական էկրան վերադառնալը**

Սեղմել ավարտի ստեղնը:

**Ընտրացանկի տեսքը փոխելը**

Ընտրել Ընտցնկ > Ընտրք > Հիմն. ընտցկի տեսք:

## Հաղորդագրությունների փոխանակում

Ձեր սարքի միջոցով ստեղծեք և ստացեք տեքստի և մուլտիմեդիայի նման հաղորդագրություններ: Հաղորդագրությունների փոխանակման ծառայություններից հնարավոր է օգտվել այն դեպքում միայն, եթե ձեր ցանցը կամ ծառայության մատակարարը ապահովում են դրանք:

### Տեքստային և մուլտիմեդիա հաղորդագրություններ

Դուք կարող եք ստեղծել հաղորդագրություն և ընտրովի կցել, օրինակ, նկար: Երբ ֆայլ է կցվում, ձեր հեռախոսը տեքստային հաղորդագրությունն ինքնաբար փոխում է մուլտիմեդիա հաղորդագրության:

### Տեքստային հաղորդագրություններ

Ձեր սարքն ապահովում է մեկ հաղորդագրության ծավալի սահմանափակումը գերազանցող տեքստային հաղորդագրությունների առաքում: Երկար հաղորդագրություններն ուղարկվում են երկու կամ ավելի հաղորդագրությունների տեսքով: Այդ դեպքում ծառայություն մատուցողը կարող է համապատասխան վարձ գանձել: Շեշտերով նշանագրերը, այլ նշաններ կամ որոշ լեզուների ընտրանքներ սովորականից ավելի տեղ են զբաղեցնում՝ սահմանափակելով մեկ հաղորդագրությամբ ուղարկվող նիշերի քանակը:

Ցուցադրվում է մնացած նիշերի ընդհանուր քանակը և ուղարկելու համար անհրաժեշտ հաղորդագրությունների թիվը:

Հաղորդագրություններ ուղարկելու համար Ձեր սարքում պետք է պահպանված լինի հաղորդագրությունների կենտրոնի ճիշտ համարը: Սովորաբար, այս համարը կանխադրված է լինում Ձեր SIM քարտի միջոցով:

Համարը ձեռքով կանխադրելու համար կատարեք հետևյալ քայլերը՝

1 Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Նրացուցիչ > Հղգրն պրմտ > Տեքստ. հղգներ > Հղգն կենտրոն:
2 Մուտքագրեք անունը և Ձեր ծառայության մատակարարի կողմից տրամադրված համարը:

### Մուլտիմեդիա հաղորդագրություններ

Մուլտիմեդիա հաղորդագրությունը կարող է պարունակել տեքստ, նկարներ և ձայնահոլովակներ կամ տեսահոլովակներ:

Միայն համատեղելի ֆունկցիոնալ հնարավորություններ ունեցող սարքերը կարող են մուլտիմեդիա հաղորդագրություններ ստանալ և ցուցադրել: Ընդունող սարքից կախված՝ հաղորդագրության տեսքը կարող է տարբեր լինել:

Անլար ցանցը կարող է սահմանափակել MMS հաղորդագրությունների չափը: Եթե հաղորդագրության մեջ ներմուծված նկարի չափը գերազանցում է այս սահմանափակումը, սարքը կարող է այն փոքրացնել, որպեսզի հնարավոր լինի ուղարկել MMS-ի միջոցով:

**Կարևոր է.** Զգույշ եղեք հաղորդագրությունները բացելիս։ Հաղորդագրությունները կարող են վնասակար ծրագրեր պարունակել կամ այլ կերպ վնասակար ազդեցություն ունենալ Ձեր սարքի կամ համակարգչի վրա։

Մուլտիմեդիա հաղորդագրությունների ծառայության (MMS) մատչելիությունը ստուգելու և այդ ծառայությանը գրանցվելու համար դիմեք Ձեր ծառայություն մատուցողին։

## Հաղորդագրություն ստեղծելը

1 Ընտրեք **Ընտցնկ** > **Հաղորդագրում** > **Ստեղծ. հղգն**։

2 Գրեք հաղորդագրությունը։

Հատուկ նիշ կամ ժպտիկ ավելացնելու համար ընտրել **Ընտրք** > **Մտցնել սիմվոլ**։

Հաղորդագրությանը օբյեկտ կցելու համար ընտրել **Ընտրք** > **Մտցնել օբյեկտ**։ Հաղորդագրության տեսակն ինքնաբերաբար փոխվում է՝ դառնալով մուլտիմեդիա հաղորդագրություն։

3 Հասցեատերեր ավելացնելու համար ընտրել **Ուղրկել՝** և հասցեատեր։

Հեռախոսահամար կամ փոստային հասցե ձեռքով մուտքագրելու համար ընտրել **Համար կամ էլփտ**։ Մուտքագրել հեռախոսահամար կամ ընտրել **Էլփոստ** և մուտքագրել փոստային հասցե։

4 Ընտրել **Ուղրկել**։

Մուլտիմեդիա հաղորդագրությունները նշվում են ցուցասարքի վերևի մասում ցուցադրվող պատկերակով։

Ծառայության մատակարարները կարող են տարբեր վճարներ գանձել՝ հաղորդագրության տիպից կախված։ Մանրամասների համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին։

## Տապ հաղորդագրություններ

Տապ հաղորդագրությունները տեքստային հաղորդագրություններ են, որոնք ակնթարթորեն ցուցադրվում են ստացվելուն պես։

Ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում**։

1 Ընտրել **Լրացուցիչ** > **Այլ հղգրներ** > **Տապ հղգրթյուն**։

2 Գրել հաղորդագրություն։

3 Ընտրել **Ուղրկել՝** և կոնտակտ։

## Nokia Xpress ձայնային հաղորդագրություններ

MMS-ի միջոցով հուսալիորեն ստեղծեք և ուղարկեք ձայնային հաղորդագրություններ։

Ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում**։

1 Ընտրել **Լրացուցիչ** > **Այլ հղգրներ** > **Ձայն. հղգրություն**։ Բացվում է ձայնագրանցիչը։

2 Հաղորդագրությունը գրանցելու համար ընտրել ●։

3 Գրանցելը վերջացնելու համար ընտրել ■։

4 Ընտրել **Ուղրկել՝** և կոնտակտ։

## Nokia Փոստ

Սարքով մուտք գործեք Ձեր փոստի հաշիվ՝ նամակ կարդալու, գրելու և ուղարկելու համար: Փոստի այս ծրագիրը տարբեր է SMS-ի փոստի գործառույթից:

Այս գործառույթը հասանելի չէ բոլոր տարածաշրջաններում:

Նախքան փոստից օգտվել կարողանալը Դուք պետք է փոստի հաշիվ ունենաք փոստի ծառայության մատակարարից: Առկայության և ճիշտ պարամետրերի համար դիմեք փոստի ծառայության մատակարարին: Դուք կարող եք փոստի կազմաձևման պարամետրերը ստանալ կազմաձևման հաղորդագրության տեսքով:

### Փոստի գործարկման մոգ

Փոստի գործարկման մոգը բացվում է ինքնաբերաբար, եթե սարքում փոստի պարամետրեր սահմանված չեն: Փոստի լրացուցիչ հաշիվ ավելացնելու համար ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում** և **Էլփոստ** > **Նոր հաշիվ**: Հետևեք հրահանգներին:

### Նամակներ գրելը և ուղարկելը

Նամակ հնարավոր է գրել նախքան փոստային ծառայությանը միանալը:

1 Ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում** > **Լրացուցիչ** > **Էլփոստ** և **Ստեղծել էլ-նմկ**:
2 Մուտքագրեք ստացողի փոստի հասցեն, թեման և հաղորդագրությունը: Ֆայլ կցելու համար ընտրել **Ընտրք** > **Մտցնել**:
3 Եթե սահմանված է մեկից ավելի փոստային հաշիվ, ընտրեք այն հաշիվը, որից ցանկանում եք ուղարկել նամակը:
4 Ընտրել **Ուղարկել**:

### Նամակ կարդալն ու պատասխանելը

**Կարևոր է.** Զգույշ եղեք հաղորդագրությունները բացելիս: Հաղորդագրությունները կարող են վնասակար ծրագրեր պարունակել կամ այլ կերպ վնասակար ազդեցություն ունենալ Ձեր սարքի կամ համակարգչի վրա:

Ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում**:

**Նամակների խորագրեր ներլցնելը**

Ընտրել փոստի հասցեն:

**Նամակ և կցուրդներ ներլցնելը**

Ընտրել նամակ և **Բացել** կամ **Առբերել**:

**Նամակին պատասխանելը կամ այն փոխանցելը**

Ընտրել **Ընտրք** > **Պատասխանել** կամ **Փոխանցում**:

**Փոստի հաշիվն անջատելը**

Ընտրել **Ընտրք** > **Անջատել**: Որոշ ժամանակ գործունեությունը դադարեցնելուց հետո կապը փոստի հաշվի հետ ինքնաբար ավարտվում է:

### Ձայնային հաղորդագրություններ

Ձայնային փոստարկղը ցանցային ծառայություն է, որին գուցե հարկավոր լինի բաժանորդագրվել: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին:

**Ձեր ձայնային փոստարկղին զանգելը**

Սեղմել և պահել 1:

**Ձեր ձայնային փոստարկղի համարը խմբագրելը**

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Լրացուցիչ > Ձայն. հղգներ և Ձայն. փոստարկղի հ.:

### Հաղորդագրության պարամետրեր

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում և Լրացուցիչ > Հղգրն պրմտ:

Ընտրել հետևյալ ընտրանքներից.

**Ընդհան. պրմտ** — Նախադրել հաղորդագրությունների տառաչափը և ակտիվացնել գրաֆիկական ժպտիկներն ու առաքման հաշվետվությունները:

**Տեքստ. հղգներ** — Նախադրել տեքստային հաղորդագրությունների և SMS փոստի հաղորդագրության կենտրոնները:

**Մուլտիմեդ. հղգրներ** — Թույլատրել առաքման հաշվետվություններ, ինչպես նաև մուլտիմեդիա հաղորդագրություններ և գովազդ ստանալը, և նախադրել մուլտիմեդիա հաղորդագրությունների հետ կապված այլ նախապատվություններ:

**Սպաս. հղգրներ** — Ակտիվացրեք սպասարկման հաղորդագրությունները և նախադրեք սպասարկման հաղորդագրությունների հետ կապված նախապատվությունները:

## Կոնտակտներ

SIM քարտի և սարքի հիշողության մեջ կարող եք պահպանել անուններ ու հեռախոսահամարներ: Սարքի հիշողության մեջ կարող եք պահպանել կոնտակտներ՝ հեռախոսահամարներով և տեքստային տարրերով: SIM քարտում պահպանված անուններն ու համարները նշվում են -ով:

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Անուններ:

**Կոնտակտ ավելացնելը**

Ընտրել Ընտրք > Ավլց. նոր կոնտ.:

**Որևէ կոնտակտի տվյալներ ավելացնելը**

Համոզվել, որ օգտագործվող հիշողությունը կա՛մ Հեռախոս է, կա՛մ Հեռախոս և SIM: Ոլորել մինչև կոնտակտը և ընտրել Մնրմսն > Ընտրք > Ավելց. մանրամասն:

**Կոնտակտ որոնելը**

Ընտրել Անուններ: Ոլորել կոնտակտների ցանկով կամ մուտքագրել կոնտակտի անվան առաջին նիշերը:

**Սարքի կամ SIM քարտի հիշողությունից կոնտակտ պատճենելը**

Ընտրել Անուններ, ոլորել մինչև կոնտակտը և ընտրել Ընտրք > Լրացուցիչ > Պատճ. կնտկտը: SIM քարտում կարող եք միայն մեկ հեռախոսահամար պահպանել յուրաքանչյուր անվան համար:

Կոնտակտների համար SIM քարտի կամ սարքի հիշողությունը, կոնտակտների ցանկում անունների և համարների ցուցադրման եղանակն ընտրելու, ինչպես նաև կոնտակտների համար նախատեսված հիշողության ծավալը դիտելու համար ընտրել Պարամետրեր և համապատասխան ընտրանքը:

Դուք կարող եք որևէ անձի կոնտակտային տվյալներ ուղարկել ու ստանալ այցեքարտի տեսքով՝ vCard ստանդարտ ապահովող համատեղելի սարքից:

**Այցեքարտ ուղարկելը**

Ընտրել կոնտակտ, Ընտրք > Լրացուցիչ > Այցեքարտ, և ուղարկման տեսակը:

# Կանչերի գրանցամատյան

Ձեր կանչերի, հաղորդագրությունների, տվյալների և համաժամացման վերաբերյալ տեղեկություններ դիտելու համար ընտրեք Ընտցնկ > Մատյան և առկա ընտրանքներից:

**Ծանուցում.** Ծառայություն մատուցողի՝ հեռախոսազանգերի և այլ ծառայությունների համար ներկայացրած փաստացի հաշիվը կախված է ցանցի հատկություններից, բոլորակման հաշվարկի կլորացումից, հարկերից, և այլն:

# Պարամետրեր

## Պրոֆիլներ

Սպասո՞ւմ եք զանգի, բայց չե՞ք ուզում, որ սարքը զանգի ազդանշան հնչեցնի: Ձեր սարքում առկա են զանազան պարամետրերի՝ պրոֆիլներ կոչվող խմբեր, որոնք կարող եք անհատականացնել տարբեր իրադարձությունների և միջավայրերի համար նախատեսված զանգերի ազդանշաններով:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Պրոֆիլներ:

Ընտրել ցանկալի պրոֆիլը և հետևյալ ընտրանքներից.

**Ակտիվացնել** — Ակտիվացնել պրոֆիլը:

**Անհատակնցնել** — Փոփոխել պրոֆիլի պարամետրերը:

**Ժամանակավրվծ** — Նախադրել պրոֆիլի՝ մինչև որոշակի ժամն ակտիվ լինելը: Երբ պրոֆիլի համար նախադրված ժամանակը սպառվում է, ակտիվանում է նախորդ պրոֆիլը, որի վրա ժամանակի սահմանափակում դրված չի եղել:

## Հնչերանգներ

Դուք կարող եք փոխել ընտրված ակտիվ պրոֆիլի հնչերանգների պարամետրերը:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Հնչերանգներ: Դուք կարող եք նույն պարամետրերը գտնել Պրոֆիլներ ընտրացանկում:

## Ցուցասարք

Պաստառը, տառաչափը կամ սարքի ցուցասարքին առնչվող այլ առանձնահատկություններ դիտելու կամ կարգավորելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Ցուցասարք:

## Օր և ժամ

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Ամսաթիվ և ժամ:

### Օրը և ժամը նախադրելը

Ընտրել Օրուժամի պրմտ:

### Օրվա և ժամի ձևաչափեր նախադրելը

Ընտրել Օրուժամի ձևաչափ:

### Ժամանակը ընթացիկ ժամային գոտու համաձայն ինքնաբերաբար թարմացնելը

Ընտրել Օրուժամի ինքնթրմ (ցանցային ծառայություն):

## Դյուրանցումներ

Անհատական դյուրանցումներով դուք կարող եք արագ մուտք գործել դեպի հեռախոսի հաճախակի օգտագործվող գործառույթները:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Իմ դյրանցմնր:

### Ընտրության ստեղներին հեռախոսի գործառույթներ վերագրելը

Ընտրել Աջ ընտր. ստեղն կամ Ձախ ընտ. ստեղն որևէ գործառույթ ցանկից:

### Ոլորման ստեղնի համար դյուրանցման գործառույթներ ընտրելը

Ընտրել Նավարկման ստեղն: Ոլորել ցանկալի ուղղությամբ և ընտրել Փոխել կամ Վերագր և որևէ գործառույթ ցանկից:

## Համաժամացում և կրկնօրինակում

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Հմժ. և կրկնօրնկ:

Ընտրել հետևյալ ընտրանքներից.

**Հեռ. անջատիչ** — Ընտրված տվյալները, օրինակ՝ կոնտակտները, օրացույցի գրառումները, նշումները կամ հաղորդագրությունները, համաժամացրեք կամ պատճենեք Ձեր սարքի և մեկ այլ սարքի միջև:

**Ստղծ. կրկնօրնկ** — Կրկնօրինակել ընտրված տվյալները

**Վկնգ. կրկնօրնկ** — Վերականգնել տվյալները կրկնօրինակից: Կրկնօրինակ ֆայլի մանրամասները դիտելու համար ընտրել Ընտրք > Մանրամասներ:

**Տվյ. փոխանցում** — Ընտրված տվյալները համաժամացրեք կամ պատճենեք Ձեր սարքի և ցանցային սերվերի (ցանցային ծառայության) միջև:

## Միացնելիություն

Ձեր հեռախոսն ունի մի քանի հնարավորություն, որոնք թույլ են տալիս միանալ այլ սարքերի՝տվյալներ փոխանցելու և ստանալու համար:

## Bluetooth անլար տեխնոլոգիա

Bluetooth տեխնոլոգիան թույլ է տալիս սարքը ռադիոալիքների միջոցով միացնել 10 մետր (32 ոտնաչափ) շառավղի վրա գտնվող համատեղելի Bluetooth սարքին կամ լրասարքին:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Միացնլիություն > Bluetooth:

### Bluetooth միացման գործարկում

1 Ընտրել **Իմ հեռ.** անունը և մուտքագրել սարքի անունը:

2 Ընտրել Bluetooth > Միացնել: նշանը ցույց է տալիս, որ Bluetooth միացնելիությունն ակտիվ է:

3 Սարքը աուդիո լրասարքին միացնելու համար ընտրել **Միաց. լս. լրսարքեր** և այն սարքը, որին ցանկանում եք միացում կատարել:

4 Սարքը տիրույթում առկա որևէ Bluetooth սարքի հետ զուգակելու համար ընտրել **Զուգկված սարքեր** > **Ավլ. նոր սարք**:

   Ոլորել դեպի գտնված սարքը և ընտրել **Ավլցնլ**:

   Սարքի մեջ մուտքագրել անցակոդ (մինչև16 նիշ) և թույլատրել միացումը մյուս Bluetooth սարքի վրա:

Եթե մտահոգված եք անվտանգությամբ, ապաակտիվացրեք Bluetooth գործառույթը կամ կանխադրեք **Իմ հեռ. տսնլիությն-ը Թաքցված-ի**: Bluetooth հաղորդակցություն ունեցեք միայն նրանց հետ, ում վստահում եք:

### ԱՀ-ն համացանցին միացնելը

Կարող եք օգտագործել Bluetooth տեխնոլոգիան՝ Ձեր համատեղելի ԱՀ-ն առանց PC Suite ծրագրակազմի համացանցին միացնելու համար: Ձեր սարքը պետք է համացանցին (ցանցային ծառայության) միանալու հնարավորություն ունենա, իսկ ԱՀ-ը պետք է ապահովի Bluetooth տեխնոլոգիան: Սարքի ցանցային մուտքի կետի (NAP) ծառայությանը միանալուց և Ձեր ԱՀ-ի հետ զուգակելուց հետո, սարքն ինքնաբերաբար փաթեթային տվյալների կապ կհաստատի համացանցի հետ:

Սույն սարքը բավարարում է Bluetooth 2.0 + EDR հատկորոշմանը, որն ապահովում է հետևյալ պրոֆիլները. ընդհանուր մուտք, ձեռնազատ, ականջակալ, օբյեկտի հրում, ֆայլերի փոխանցում, հեռադիր մուտք դեպի ցանց, հաջորդական պորտ, SIM մուտք և օբյեկտների ընդհանուր փոխանակում: Bluetooth տեխնոլոգիայով աշխատող այլ սարքերի հետ փոխհամատեղելիությունն ապահովելու համար օգտագործեք միայն Nokia-ի կողմից այս մոդելի համար թույլատրված լրասարքեր: Սույն սարքի հետ այլ սարքերի համատեղելիությունը պարզելու համար դիմեք այդ սարքերն արտադրողներին:

Bluetooth տեխնոլոգիաների կիրարկմամբ գործող ֆունկցիոնալ հնարավորությունները մարտկոցից ավելի շատ սնուցում են պահանջում, ինչը նվազեցնում է մարտկոցի կյանքը:

### Փաթեթային տվյալներ

Ընդհանուր նշանակության փաթեթային ռադիոկապը (GPRS) ցանցային ծառայություն է, որը շարժական հեռախոսներին թույլ է տալիս տվյալներ ուղարկել և ստանալ ինտերնետային կանխագրի (IP) վրա հիմնված ցանցով:

Սահմանելու համար, թե ինչպես օգտվել ծառայությունից, ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Միացնելիություն** > **Փաթ. տվյալներ** > **Փաթ. տվյլ. միացում** և հետևյալ ընտրանքներից.

**Պինջի դեպքում** — փաթեթային տվյալների փոխանցման միացում հաստատելու համար, երբ ծրագիրը դա պահանջում է: Միացումը փակվում է, երբ ծրագրի գործողությունն ավարտվում է:

**Միշտ օնլայն** — փաթեթային տվյալների ցանցին ինքնաբար միանալու համար, երբ դուք միացնում եք հեռախոսը:

## Կանչ և հեռախոս

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Կանչ**:

**Մուտք կանչերը ծեղելը**

Ընտրել **Կանչի ծեղում** (ցանցային ծառայություն): Մանրամասների համար դիմեք ձեր ծառայության մատակարարին:

**Անհաջող փորձից հետո համարի ինքնաբերաբար վերահավաքման տասը փորձ կատարելը**

Ընտրել **Ավտ. վերահվքում** > **Միացնել**:

**Կանչի ընթացքում մուտք կանչերի մասին ծանուցում ստանալը**

Ընտրել **Կանչի հետաձգում** > **Ակտիվացնել** (ցանցային ծառայություն):

**Ձեր համարը զանգահարվող անձին ցուցադրելը կամ նրանից թաքցնելը**

Ընտրել **Ուղ. իմ բժնրդ. ID** (ցանցային ծառայություն):

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Հեռախոս**:

**Ցուցադրման լեզուն նախադրելը**

Ընտրել **Լեզվի պարամետրեր** > **Հեռախոսի լեզուն**:

## Լրասարքեր

Այս ընտրացանկը մատչելի է, միայն եթե սարքը միացված է համատեղելի լրասարքի:

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Լրասարքեր**: Ընտրել լրասարք և տվյալ լրասարքին համապատասխան ընտրանք:

## Կազմաձևում

Կարող եք ձեր սարքը կազմաձևել որոշակի ծառայությունների համար պահանջվող պարամետրերով: Ձեր ծառայության մատակարարը նույնպես կարող է ձեզ ուղարկել այդ պարամետրերը:

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** և **Կազմաձև**:

Ընտրել հետևյալ ընտրանքներից.

**Կնխդրվծ կզմձև պմ** — Դիտել սարքում պահպանված ծառայության մատակարարներին և կանխադրել ծառայության մատակարար:

**Ակտ. կնխ. պմ բլ. ծգ** — Ակտիվացնել կանխադրված կազմաձևման պարամետրերը՝ պահովվող ծրագրերի համար:

**Նախընտ. մտf. կետ** — Դիտել պահպանված մուտfի կետերը:

**Անհատական պրմտ** — Ավելացնել նոր անձնական հաշիվ զանազան ծառայությունների համար, ինչպես նաև ակտիվացնել կամ վերացնել դրանf: Նոր անձնական հաշիվ ավելացնելու համար ընտրել Ավ. նոր կամ Ընտրf > Ավելացնել նորը: Ընտրել ծառայության տեսակը և մուտfագրել պահանջվող տեղեկությունները: Անձնական հաշիվն ակտիվացնելու համար ոլորել դեպի հաշիվը և ընտրել Ընտրf > Ակտիվացնել:

### Գործարանային պարամետրերը վերականգնելը

Հեռախոսը գործարանային վիճակի բերելու համար ընտրէf Ընտցնկ > Պարամետրեր > Վրկնգ. գրծն. պմ և հետևյալ ընտրանfներից մեկը.

**Միայն պրմետրեր** — Հետադարձէf բոլոր նախապատվությունների պարամետրերն՝ առանց անձնական տվյալների վերացման:

**Բոլորը** — Հետադարձէf բոլոր նախապատվությունների պարամետրերը և վերացրէf բոլոր անձնական տվյալները, ինչպիսիf են կոնտակտները, հաղորդագրությունները, մեդիա ֆայլերը և ակտիվացման բանալիները:

# Օպերատորի ընտրացանկ

Մուտf գործէf ձեր ցանցային օպերատորի կողմից տրամադրված ծառայությունների պորտալ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմէf ձեր ցանցային օպերատորին: Օպերատորը կարող է այս ընտրացանկը թարմացնել սպասարկման հաղորդագրությամբ:

# Պատկերասրահ

Պատկերասրահում կարող եf կառավարել պատկերներ, տեսահոլովակներ և երաժշտական ֆայլեր:

**Պատկերասրահի բովանդակությունը դիտելը**
Ընտրել Ընտցնկ > Պատկերասրահ:

# Ծրագրեր

## Զարթուցիչ

Կարող եf նախադրել տագնապը՝ նախընտրած ժամին հնչելու համար:

**Տագնապը նախադրելը**

1. Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Զարթուցիչ:
2. Նախադրել տագնապը և մուտfագրել տագնապի ժամը:
3. Շաբաթվա նախընտրած օրերին տագնապը հնչեցնելու համար ընտրել Կրկնում՝ > Միացված և օրերը:
4. Ընտրել տագնապի ազդանշանը: Ռադիոն որպես տագնապի ազդանշան ընտրելու դեպfում սարfին միացնել գլխային հեռախոսը:
5. Նախադրել նիրհելու պարապուրդի տևողությունը և ընտրել Պահպնել:

**Տագնապը վերջացնելը**

Ընտրել Վերջ: Եթե թույլ եք տալիս, որ տագնապը հնչի մեկ րոպե, կամ ընտրում եք Նիրհել, տագնապն ընդհատվում է նիրհման պարապուրդի տևողության չափով, այնուհետև վերականգնվում է:

## Օրացույց և անելիքների ցանկ

Ընտրել Ընտցնկ > Օրացույց: Ընթացիկ օրը շրջանակված է: Եթե օրվա համար նշումներ կան արված, ապա օրը ցույց է տրվում թավ նիշերով:

**Օրացուցային նշում ավելացնելը**

Ոլորել դեպի ամսաթիվը և ընտրել Ընտրք > Նշում անել:

**Նշման մանրամասները դիտելը**

Ոլորել դեպի նշումը և ընտրել Դիտել:

**Օրացույցից բոլոր նշումները վերացնելը**

Ընտրել Ընտրք > Վերացնել նշումներ > Բոլոր նշումները:

**Անելիքների ցանկը դիտելը**

Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Անելիքների ցնկ:

Անելիքների ցանկը ցուցադրվում և տեսակավորվում է ըստ առաջնայնության: Նշում ավելացնելու, վերացնելու կամ ուղարկելու, գրառումը որպես արված նշելու կամ անելիքների ցանկն ըստ վերջնաժամկետի տեսակավորելու համար ընտրել Ընտրք:

## Հավելյալ

Ձեր սարքում կարող են ներառված լինել դրա համար հատուկ նախատեսված որոշ խաղեր և Java™ ծրագրեր:

Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Հավելյալ:

**Խաղ կամ ծրագիր բացելը**

Ընտրել Խաղեր, Հավաքածու կամ հիշողության քարտ, ինչպես նաև խաղ կամ ծրագիր:

**Խաղի և ծրագրի տեղադրումների համար մատչելի հիշողության ծավալը դիտելը**

Ընտրել Ընտրք > Հիշ. կարգավիճակ:

**Խաղ կամ ծրագիր ներլցնելը**

Ընտրել Ընտրք > Ներլցումներ > Խաղի ներլցնք կամ Ծր. ներլցումներ:

Ձեր սարքը պահպանում է J2ME™ Java ծրագրեր: Ներլցնելուց առաջ համոզվեք, որ ծրագիրը համատեղելի է սարքի հետ:

**Կարևոր է.** Տեղադրեք և օգտագործեք միայն վստահելի աղբյուրներից ստացված ծրագրեր: Ոչ վստահելի աղբյուրներից ստացված ծրագրերը կարող են պարունակել չարամիտ ծրագրեր, որոնք կարող են մուտք գործել Ձեր սարքում պահվող տվյալներ, ֆինանսական վնաս պատճառել կամ վնասել Ձեր սարքը:

Ներլցված ծրագրերը կարելի է պահպանել Պատկերասրահ-ում՝ Ծրագրեր-ի փոխարեն:

## Խցիկ և վիդեո

Ձեր սարքը ապահովում է 1200x1600 պիքսել խտությամբ նկարահանում:

### Խցիկի ռեժիմ

**Լուսանկարահանման գործառույթից օգտվելը**
Հիմնական էկրանի ռեժիմում սեղմել սևեռման ստեղնը:

**Չափերը մեծացնելը կամ փոքրացնելը**
Ոլորել վեր կամ վար:

**Պատկեր սևեռելը**
Սեղմել սևեռման ստեղնը:

**Նախադիտման ռեժիմը և ժամանակը նախադրելը**
Ընտրել Ընտրք > Պարամետրեր > Լսնկրի նխդիտմ. ժմկ:

Ինքնաթողն ակտիվացնելու կամ արագ հաջորդականությամբ պատկերներ սևեռելու համար ընտրել Ընտրք և հարկավոր տարբերակը:

### Տեսագրման ռեժիմ

**Տեսագրման գործառույթից օգտվելը**
Սեղմել և պահել սևեռման ստեղնը:

**Տեսախոլովակի տեսագրումը սկսելը**
Սեղմել սևեռման ստեղնը:

**Խցիկի ռեժիմից տեսագրման ռեժիմին անցնելը**
Խցիկի կամ տեսագրման ռեժիմում ոլորել ձախ կամ աջ:

## FM ռադիո

FM ռադիոյի աշխատանքը կախված է ալեհավաքից, որը հեռախոսի նույն ալեհավաքը չէ: FM ռադիոյի նորմալ աշխատանքի համար հարկավոր է համատեղելի գլխային հեռախոս կամ լրասարք օգտագործել:

**Ուշադրություն.**
Տևականորեն բարձր ձայն լսելը կարող է վնասել Ձեր լսողությունը: Երաժշտությունը լսեք չափավոր բարձրությամբ և բարձրախոսից օգտվելիս սարքն ականջին մոտ մի պահեք:

Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Ռադիո կամ, հիմնական էկրանի ռեժիմում, սեղմել և պահել *:

**Հարևան կայան որոնելը**

Ոլորման սահողը սեղմել և պահել դեպի ձախ կամ աջ:

**Կայան պահպանելը**

Նարել դեպի հարկավոր կայանը և ընտրել Ընտրք > Պահպանել կայանը:

**Պահպանված կայաններից մեկից մյուսին անցնելը**

Ոլորեք ձախ կամ աջ՝ մի կայանից մյուսին անցնելու համար, կամ սեղմեք հիշողության մեջ հարկավոր կայանի տեղին համապատասխանող թվային սահողը:

**Ձայնի ուժգնությունը կարգավորելը**

Ոլորել վեր կամ վար:

**Ռադիոն հետին պլանում աշխատեցնելը**

Սեղմել ավարտի սահողը:

**Ռադիոն փակելը**

Սեղմել և պահել ավարտի սահողը:

## Ձայնագրանցիչ

Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Ձայնագրանցիչ:

**Գրանցում սկսելը**

Ընտրել ձայնագրման պատկերակը:

**Կանչի ընթացքում գրանցում սկսելը**

Ընտրել Ընտրք > Լրացուցիչ > Գրանցել: Կանչ գրանցելիս հեռախոսը պահել ականջի մոտ բնական դիրքում: Գրանցումը պահպանվում է Գրանցումներ պահոցում՝ Պատկերասրահ-ում:

**Ամենավերջին գրանցումը լսելը**

Ընտրել Ընտրք > Նվագ. վերջինը:

**Վերջին գրանցումը մուլտիմեդիա հաղորդագրությամբ ուղարկելը**

Ընտրել Ընտրք > Ուղ. վրջն գրցծ:

## Մեդիա նվագարկիչ

Ձեր սարքում ներառված է մեդիա նվագարկիչ՝ երգեր, այլ MP3 կամ AAC ձայնաֆայլեր լսելու համար:

**Ուշադրություն.**
Տևականորեն բարձր ձայն լսելը կարող է վնասել Ձեր լսողությունը: Երաժշտությունը լսեք չափավոր բարձրությամբ և բարձրախոսից օգտվելիս սարքն ականջին մոտ մի պահեք:

Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Մեդիա նվգկիչ:

**Նվագարկումը սկսելը կամ դադար տալը**
Սեղմել ոլորմանստեղնը:

**Դեպի ընթացիկ երգի սկիզբը ցատկելը**
Ոլորել դեպի ձախ:

**Դեպի նախորդ երգը ցատկելը**
Երկու անգամ ոլորել դեպի ձախ:

**Դեպի հաջորդ երգը ցատկելը**
Ոլորել դեպի աջ:

**Ընթացիկ երգը հետ փաթաթելը**
Ոլորման ստեղնը սեղմել և պահել դեպի ձախ:

**Ընթացիկ երգը արագ առաջ փաթաթելը**
Ոլորման ստեղնը սեղմել և պահել դեպի աջ:

**Ձայնի ուժգնությունը կարգավորելը**
Ոլորել վեր կամ վար:

**Նվագարկչի ձայնը խլացնելը կամ միացնելը**
Սեղմել **#**:

**Մեդիա նվագարկիչը հետին պլանում աշխատեցնելը**
Սեղմել ավարտի ստեղնը:

**Մեդիա նվագարկիչը փակելը**
Սեղմել և պահել ավարտի ստեղնը:

# Քարտեզներ

## Քարտեզների մասին

Ընտրել Ընտցնկ > Քարտեզներ:

Քարտեզների միջոցով կարող եք դիտել տարբեր քաղաքների և երկրների քարտեզներ, որոնել հասցեներ և տեսարժան վայրեր, ինչպես նաև, մատչելի լինելու դեպքում, դիտել Ձեր ընթացիկ գտնվելու վայրը: Կարող եք նաև ծրագրել երթուղիներ և ստանալ նավարկման մանրամասն օգնություն:

Եթե Ձեր սարքում կամ դրանում առկա հիշաքարտում մատչելի են քարտեզներ, ապա կարող եք դիտել դրանք՝ առանց ինտերնետ միացում օգտագործելու: Եթե Ձեր սարքում արդեն իսկ ներլցված քարտեզները չեն պարունակում դիտվող տարածքը, այդ տարածքի քարտեզը ինքնաբերաբար ներլցվում է ինտերնետից: Հնարավոր է, որ կատարվի հարցում՝ ինտերնետ միացման համար մուտքի կետ ընտրելու համար:

Քարտեզներ ներլցնելը կարող է հանգեցնել Ձեր ծառայության մատակարարի ցանցով մեծ ծավալի տվյալների փոխանցման: Տվյալների փոխանցման համար գանձվող վճարի վերաբերյալ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին:

Որոշ ծառայություններ կարող են հասանելի չլինել բոլոր երկրներում և տրամադրվել միայն որոշ լեզուներով:

Քարտեզները բացելուց հետո ընտրել հետևյալից.

**Ընթացիկ դիրք** — Դիտել ներկայիս գտնվելու վայրը:

**Վերջին տեղերը** — Դիտել արդեն իսկ դիտված վայրերը:

**Գտնել հասցեներ** — Որոնել որոշակի հասցեներ:

**Ինձ ցույց տալ** — Ուղղությունը դեպի նպատակակետը դիտել ուղիղ գծի տեսքով:

**Պահված տեղերը** — Գտնել սարքում պահպանված վայրը:

**Ծրգրել երթուղի** — Ծրագրել երթուղի:

**Պարամետրեր** — Սահմանել Քարտեզների պարամետրերը:

Գրեթե բոլոր թվային քարտեզները պարունակում են որոշակի աստիճանի անճշտություններ և այս կամ այն չափով ամբողջական չեն: Չի կարելի ամբողջովին ապավինել սույն սարքում օգտագործելու համար Ձեր ներլցրած քարտեզներին:

## Ներածություն

### Տեղորոշման մեթոդների մասին

Քարտեզները ցուցադրում են քարտեզի վրա Ձեր գտնվելու վայրը՝ օգտագործելով GPS կամ A-GPS:

Գլոբալ տեղորոշման համակարգը (GPS) Ձեր գտնվելու վայրը հաշվարկելու համար օգտագործվող արբանյակային տեղորոշման համակարգ է: Օժանդակված GPS (A-GPS)-ը ցանցային ծառայություն է, որն օգտագործում է տեղական ցանցի տեղեկությունները՝ GPS տեղորոշման արագությունն ու ճշգրտությունը բարելավելու համար:

A-GPS տվյալներ ներլցնելը ներառում է Ձեր ծառայության մատակարարի ցանցով տվյալներ փոխանցելը: Ռոումինգ օգտագործելու ընթացքում, այսինքն՝ Ձեր ծառայության մատակարարի ցանցից դուրս տվյալների փոխանցման դիմաց գանձվող վճարը կարող է լինել նախատեսվածից բարձր: Հետևաբար, ռոումինգ օգտագործելու դեպքում A-GPS–ը կանխադրված չի օգտագործվում, սակայն դա նշանակում է, որ Ձեր գտնվելու վայրը հաշվարկելը կարող է տևել ավելի երկար, քան A-GPS-ն օգտագործելու դեպքում:

Ռոումինգի ընթացքում A-GPS օգտագործելը թույլատրելու համար ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Միացնլիություն** > **GPS** > **Ինտ. օժնդկմամբ GPS**: Տվյալների փոխանցման տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին:

Գլոբալ Դիրքավորման Համակարգը (GPS) գործարկում է Միացյալ Նահանգների կառավարությունը, որը համակարգի ճշգրիտ աշխատանքի և սպասարկման միակ պատասխանատուն է: Տեղորոշման ճշգրտությունը կարող է փոփոխվել Միացյալ Նահանգների կառավարության կողմից GPS արբանյակների վրա կատարվող փոփոխությունների հետևանքով և ենթակա է փոփոխման՝ ԱՄՆ Պաշտպանության Դեպարտամենտի քաղաքացիական GPS ռազմավարության և Ֆեդերալ ռադիոնավագնացության պլանից կախված: Արբանյակների անհաջող դիրքերում գտնվելը նույնպես կարող է ազդել չափումների ճշտության վրա: Ձեր գտնվելու վայրը, շենքերի ու բնական արգելքների առկայությունը, ինչպես նաև եղանակային պայմանները

նույնպես կարող են ազդեցություն ունենալ GPS ազդանշանների առկայության ու որակի վրա: GPS ազդանշանները գուցե հասանելի չլինեն շենքերի ներսում կամ մետրոյում և կարող են թուլանալ բետոնի կամ մետաղի պես նյութերի պատճառով:

GPS համակարգը չպետք է օգտագործվի որպես տեղորոշման ճշգրիտ սարք. ինչպես տեղորոշման, այնպես էլ տարածության մեջ տեղաշարժվելու նպատակով կողմնորոշման համար չպետք է ապավինել բացառապես GPS ընդունիչից և բջջային ռադիոցանցերից ստացված տվյալներին:

Ճանապարհաչափի ճշտությունը սահմանափակ է, և հնարավոր են կլորացման սխալներ: Ճշգրտության վրա կարող են ազդել նաև GPS ազդանշանների առկայությունն ու որակը:

## GPS ընդունիչ

Եթե Ձեր սարքն ունի ներքին GPS ընդունիչ, այն կարող եք օգտագործել Քարտեզների հետ:

Ներքին GPS ընդունիչ օգտագործելը կարող է ավելի արագ սպառել սարքի մարտկոցը:

### Արտաքին GPS ընդունիչ օգտագործելը

1 Լրիվ լիցքավորեք համատեղելի GPS ընդունիչը և միացրեք այն:
2 Bluetooth միացում գործարկեք Ձեր սարքի և GPS ընդունիչի միջև:
3 Տեղադրել GPS ընդունիչն այնպիսի վայրում, որտեղից ազատ երևում է երկինքը:
4 Բացել Քարտեզներ ծրագիրը և ընտրել արտաքին GPS ընդունիչը:

Առաջին GPS միացում հաստատելու համար կարող է պահանջվել մի քանի րոպե: Հետագա միացումները կատարվելու են ավելի արագ, բայց եթե մի քանի օր չօգտագործեք GPS միացումը կամ գտնվեք շատ հեռու այն վայրից, որտեղ վերջին անգամ օգտագործել եք այն, ապա արբանյակային ուժեղ ազդանշան գտնելու համար որոշակի ժամանակ կպահանջվի:

Քարտեզներ դիտելու, հասցեներ ու վայրեր որոնելու և երթուղիներ ծրագրելու համար կարող եք նաև օգտագործել Քարտեզներ՝ առանց GPS ընդունիչի:

## Դեպի նպատակակետր նավարկելր

### Երթուղի ծրագրելը

Ծրագրեք Ձեր ճանապարհորդությունը և, ճանապարհի ընկնելուց առաջ, ստեղծեք երթուղին և դիտեք այն քարտեզի վրա:

Ընտրել Ընտցնկ > Քարտեզներ:

1 Ընտրել Ծրգրել երթուղի:
2 Որպես երթուղու սկզբնակետ ընտրել Մեկնակետ և Ձեր ներկայիս դիրքը, պահպանված կամ վերջին տեղը, որևէ վայր քարտեզի վրա կամ որոշակի հասցե:
3 Ընտրել Նպատակակետ և Ձեր երթուղու վերջնակետը:

### Երթուղին քարտեզի վրա ցուցադրելը

Ընտրել Ընտրք > Ցույց տալ երթուղին > Դտ քոզ:

**Դեպի նպատակակետը նավարկելը**
Ընտրել Ընտրf > Ցույց տալ երթուղին > Ընտրf > Սկսել նավարկումը:

**Երթուղու մանրամասները դիտելը**
Ընտրել Ընտրf > Երթուղի > Երթուղու տվյալներ:

**Երթուղին ջնջելը**
Ընտրել Ընտրf > Երթուղի > Ջնջել երթուղին:

**Դեպի նախատեսված վայր նավարկելը**

Մեfենա վարելու կամ fայլելու ընթացfում կարող եf մանրամասն ուղղություններ ստանալ:

Ընտրել Ընտցնկ > **Քարտեզներ**:

1 Ընտրել Ծրգրել երթուղի և ստեղծել երթուղի:
2 Ընտրել Ընտրf > Ցույց տալ երթուղին > Ընտրf > Սկսել նավարկումը:
3 Ընդունել ցուցադրվող պատասխանատվությունից հրաժարումը, եթե հարկ լինի:
4 Ընտրել ձայնակառավարման լեզուն, եթե հարկ լինի:

Ձայնակառավարման փայլեր ներլցնելը կարող է հանգեցնել մեծ fանակությամբ տվյալների փոխանցման (ցանցային ծառայություն): Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեf Ձեր ցանցային ծառայության մատակարարին:

**Ձայնակառավարումը կրկնելը**
Ընտրել Կրկնել:

**Ձայնակառավարումը լռեցնելը**
Ընտրել Ընտրf > Խլացնել աուդիո:

Կանխադրված երթուղուց շեղվելու դեպfում սարfը ինfնաբերաբար ծրագրելու է նոր երթուղի:

**Նավարկումը վերջացնելը**
Ընտրել Վերջ:

**Նավարկում ոտfով**
Ընտրել Պարամետրեր > Երթուղու պրմտ > Երթուղու ընտրում > Ոտfով: Սա լավարկում է այն երթուղիները, որոնf ստեղծում եf ոտfով ընթացfում նավարկելու համար:

## Նավարկման տեսքը մեքենա վարելիս




1 Երթուղի
2 Ձեր գտնվելու վայրը և շարժման ուղղությունը
3 Կողմնացույց

## Նավարկման տեսքը քայլելիս




1 Ձեր տեղը
2 Երթուղի, որին անհրաժեշտ է հետևել
3 Կողմնացույց
4 Ձեր երթուղու հետքը՝ ցուցադրում է արդեն իսկ անցած ճանապարհը:
5 Նպատակակետ

## Դեպի նպատակակետն ուղղությունը դիտելը

Եթե կորստված տեղանքում եք կամ Ձեր սարքում ներլցված չեն տարածքի քարտեզները, կարող եք դիտել դեպի նպատակակետը տանող ուղղությունը:

Ընտրել Ընացնկ > Քարտեզներ:

1 Ընտրել Ինձ ցույց տալ:

2 Նպատակակետը կանխադրելու համար ընտրել համապատասխան ընտրանքը:

3 Ընտրել ցանկալի վայրը:

Ուղիղ գծով նշվում է դեպի Ձեր նպատակակետը տանող ամենաուղիղ և ամենակարճ երկարությունն ունեցող երթուղին: Այս երթուղու դեպքում անտեսվում են դրանում հանդիպող խոչընդոտները, օրինակ՝ շենքերը և բնական արգելքները, կամ բարձրության տարբերությունները:

Որոշելու համար, արդյոք երթևեկում եք ճիշտ ուղղությամբ, կարմիր կետերով նշվում է ոտքով կամ մեքենայով անցած ճանապարհը:

## Համացանց կամ Ինտերնետ

Ձեր հեռախոսի զննարկիչով կարող եք մուտք գործել զանազան ինտերնետային ծառայություններ: Համացանցային էջերի արտաքին տեսքը կարող է տարբեր լինել՝ էկրանի չափերից կախված: Հնարավոր է, որ ցանցէջերում չկարողանաք տեսնել բոլոր մանրամասնությունները:

Հեռախոսից կախված՝ համացանցի զննարկման գործառույթը կարող է ընտրացանկում ցուցադրվել որպես Համացանց կամ Ինտերնետ, այսուհետև՝ Համացանց:

**Կարևոր է.** Օգտվեք միայն այն ծառայություններից, որոնց վստահում եք և որոնք ապահովում են համապատասխան անվտանգություն և պաշտպանություն վնասակար ծրագրերից:

Այս ծառայությունների, գնորոշման և հրահանգների առկայությունը ստուգեք Ձեր ծառայության մատակարարի հետ:

Դուք կարող եք ստանալ զննարկման համար պահանջվող կազմաձևման պարամետրեր՝ որպես կազմաձևման հաղորդագրություն ծառայության մատակարարից:

### Համացանցային ծառայությանը միանալը

Ընտրել Ընտցնկ > Համացանց > Հիմնաէջ: Կամ սպասման ռեժիմում սեղմել և պահել 0:

Ծառայության հետ կապ հաստատելուց հետո կարող եք սկսել էջերի զննարկումը: Հեռախոսի ստեղների գործառույթները կարող են տարբեր լինել տարբեր ծառայությունների դեպքում: Հետևեք հեռախոսի ցուցասարքի վրայի տեքստային հրահանգներին: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր ծառայության մատակարարին:

## SIM ծառայություններ

Ձեր SIM քարտը կարող է տրամադրել հավելյալ ծառայություններ: Դուք կարող եք մուտք գործել այս ընտրացանկ այն դեպքում միայն, եթե դա ապահովվում է ձեր SIM քարտով: Ընտրացանկի անունը և բովանդակությունը կախված են առկա ծառայություններից:

# Կանաչ խորհուրդներ

Ահա՛ մի քանի խորհուրդ, թե ինչպես նպաստել շրջակա միջավայրի պաշտպանությանը:

## Խնայեք էներգիան

Մարտկոցը լրիվ լիցքավորելուց և լիցքավորիչը սարքից անջատելուց հետո լիցքավորիչը հանեք նաև պատի վարդակից:

Կարիք չի լինի մարտկոցը հաճախակի լիցքավորել, եթե անեք հետևյալը.

- Փակեք և անջատեք ծրագրերը, ծառայությունները և միացումները, երբ դրանք չեք օգտագործում:
- Թուլացրեք էկրանի պայծառությունը:
- Սարքը նախադրեք այնպես, որ ոչ ակտիվ լինելու որոշակի ժամանակից հետո այն մտնի էներգիայի խնայարարի ռեժիմ, եթե այդ հնարավորությունն առկա է ձեր սարքում:
- Անջատել անհարկի ձայները, օրինակ՝ ստեղնախմբի և կանչի հնչերանգները:

## Վերամշակում

Nokia հեռախոսում առկա նյութերի մեծամասնությունը կարող է վերամշակվել: Իմանալու համար, թե ինչպես վերամշակել Nokia արտադրանքները, այցելեք www.nokia.com/werecycle, կամ, շարժական սարքի դեպքում, www.nokia.mobi/werecycle:

Փաթեթավորումն ու օգտագործողի ուղեցույցները վերամշակման հանձնեք տեղական վերամշակման համակարգում:

## Իմացեք ավելին

Ձեր սարքի բնապահպանական հատկանիշների վերաբերյալ այցելեք www.nokia.com/ecodeclaration:

# Տեղեկություններ արտադրանքի և շահագործման անվտանգության մասին

**Ընդհանուր տեղեկություններ**

**Տեղեկություններ Ձեր սարքի մասին**

Սույն ուղեցույցում նկարագրված անլար սարքը հավանություն է ստացել (E)GSM 850, 900, 1800 և 1900 ՄՀց ցանցեր-ում օգտագործման համար: Ցանցերի մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին:

Ձեր սարքը կարող է պարունակել երրորդ անձանց ինտերնետային կայքերին միանալու համար նախապես տեղադրված էջանիշեր ու հղումներ և դեպի երրորդ անձանց կայքեր մուտք գործելու հնարավորություն տալ: Դրանք կապված չեն Nokia-ի հետ, և Nokia-ն դրանց համար որևէ պատասխանատվություն չի ստանձնում: Եթե այդպիսի կայքեր եք մտնում, նախազգուշական միջոցներ ձեռնարկեք անվտանգության կամ դրանց բովանդակության առնչությամբ:

**Ուշադրություն.**
Սույն սարքի՝ զարթուցիչից բացի այլ ֆունկցիոնալ հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է, որ սարքը միացված լինի: Մի միացրեք սարքը, երբ անլար սարքի օգտագործումը կարող է ռադիոխանգարում առաջացնել կամ վտանգ ներկայացնել:

Սույն սարքից օգտվելիս ենթարկվեք բոլոր օրենքներին և հարգեք տեղական սովորույթները, այլոց անձնական կյանքի անձեռնմխելիությունը և օրինական իրավունքները, ներառյալ հեղինակային իրավունքները: Հեղինակային իրավունքի պաշտպանությունը կարող է արգելել որոշ պատկերների, երաժշտության և այլ բովանդակության պատճենումը, փոփոխումը կամ փոխանցումը:

Սարքում պահվող կարևոր բոլոր տեղեկությունների համար ստեղծեք պահեստային պատճեններ կամ դրանք գրի առեք:

Այլ սարքերի միացնելիս կարդացեք դրանց օգտագործման ուղեցույցը՝ անվտանգության վերաբերյալ մանրամասն հրահանգներ ստանալու համար: Մի միացրեք անհամատեղելի սարքեր:

Սույն ուղեցույցում ներկայացված պատկերները կարող են տարբերվել Ձեր սարքի էկրանին ցուցադրվածներից:

Ձեր սարքի մասին այլ կարևոր տեղեկություններ ստանալու համար՝ տե՛ս օգտագործողի ուղեցույցը:

**Ցանցային ծառայություններ**

Սարքն օգտագործելու համար Դուք պետք է ծառայություն ստանաք անլար կապի ծառայություններ մատուցողի կողմից: Որոշ գործառական հնարավորություններ մատչելի են ոչ բոլոր ցանցերում, այլ հնարավորություններ կարող են պահանջել, որ Դուք հատուկ պայմանավորվածություն ձեռք բերեք Ձեր ծառայություն մատուցողի հետ՝ դրանցից օգտվելու համար: Ցանցային ծառայությունները ներառում են տվյալների փոխանցում: Ծառայության մատակարարից տեղեկացեք Ձեր տան ցանցում կիրառվող կամ այլ ցանցերում ռոումինգից օգտվելու համար սահմանված վճարների մասին: Ծառայություն մատուցողը կարող է բացատրել, թե ծառայության համար ինչ վճար կգանձվի: Որոշ ցանցերում կարող են լինել սահմանափակումներ, որոնք ազդում են այն բանի վրա, թե ինչպես կարելի է օգտվել այս սարքի որոշ հնարավորություններից, որոնք պահանջում են ցանցային ապահովում, ինչպիսին է WAP 2.0 կանխագրերի (HTTP և SSL) պես և TCP/IP կանխագրերով ու լեզվից կախված նշանագրերով գործող առանձնահատուկ տեխնոլոգիաների ապահովում:

Ձեր ծառայություն մատուցողը կարող է պահանջել, որ սարքի որոշ ֆունկցիոնալ հնարավորություններ անջատվեն կամ չակտիվացվեն: Նման դեպքերում այդ հնարավորությունները չեն երևա Ձեր սարքի հրամանացանկում: Ձեր սարքը կարող է նաև ընտրովի տարրեր ունենալ, ինչպիսիք են ընտրացանկում եղած անվանումները, ընտրացանկի դասավորվածությունն ու պատկերակները:

**Հիշողության համօգտագործում**

Սույն սարքի գործութային հիշողությունը կարող է համակցված կերպով օգտագործվել հետևյալ ֆունկցիոնալ հնարավորությունների կողմից. մուլտիմեդիա հաղորդագրությունների փոխանակում (MMS), էլփոստի ծրագիր, ակնթարթային հաղորդագրությունների փոխանակում: Այդ ֆունկցիոնալ հնարավորություններից մեկի կամ մի քանիսի օգտագործումը կարող է նվազեցնել մնացած ֆունկցիոնալ հնարավորությունների համար նախատեսված հիշողության ծավալը: Եթե սարքը հիշողության լիքը լինելու մասին ծանուցում է ցուցադրում, վերացրեք համօգտագործող հիշողության մեջ պահվող տվյալների որոշ մասը:

**Իրավունքների թվային կառավարում**

Բովանդակության սեփականատերերը կարող են իրավունքների թվային կառավարման (DRM) զանազան տեսակներ օգտագործել իրենց մտավոր սեփականությունը, այդ թվում հեղինակային իրավունքները, պաշտպանելու համար: Այս սարքը DRM ծրագրերի տարբեր տեսակներ է օգտագործում՝ DRM-ի միջոցով պաշտպանված նյութերից օգտվելու համար: Սույն սարքի միջոցով դուք կարող եք օգտվել WMDRM 10, OMA DRM 1.0, OMA DRM 1.0 forward lock և OMA DRM 2.0: Եթե որոշակի DRM ծրագիրը բովանդակությունը չի պաշտպանում, բովանդակության սեփականատերերը կարող են պահանջել, որպեսզի այդ DRM ծրագրի կողմից նոր բովանդակությունից օգտվելու հնարավորությունը դադարեցվի: Դադարեցումը կարող է նաև արգելել Ձեր սարքի վրա արդեն իսկ գտնվող DRM-պաշտպանված բովանդակության օգտագործման ժամկետի երկարաձգումը: DRM ծրագրի դադարեցումը չի ազդում DRM այլ տեսակներով պաշտպանված կամ DRM պաշտպանություն չունեցող բովանդակության օգտագործման վրա:

**Լրասարքեր**

**Ուշադրություն.**
Գործածեք բացառապես տվյալ մոդելի հետ օգտագործելու համար Nokia-ի կողմից հաստատագրված մարտկոցներ, լիցքավորիչներ և լրասարքեր: Ցանկացած այլ տեսակների օգտագործումը կարող է անվավեր դարձնել հաստատումները կամ երաշխիքները և վտանգավոր լինել: Մասնավորապես, հաստատում չստացած լիցքավորիչների կամ մարտկոցների շահագործումը կարող է հրդեհի, պայթյունի, արտահոսքի կամ այլ վտանգավոր իրադրության պատճառ դառնալ:

Nokia-ի կողմից հաստատագրված լրասարքերի առկայությունը պարզելու համար դիմեք Ձեր գործակալին: Լրասարքերի հոսանքի լարն անջատելիս բռնեք և քաշեք խրոցը, այլ ոչ թե լարը:

## Մարտկոց

### Տեղեկություններ մարտկոցի և լիցքավորիչի վերաբերյալ

Ձեր սարքը սնուցվում է վերալիցքավորվող մարտկոցից: Այս սարքի հետ օգտագործման համար նախատեսված մարտկոցն է՝ BL-5C: Nokia-ն կարող է այս սարքի համար մարտկոցների լրացուցիչ մոդելներ արտադրել: Սույն սարքը նախատեսված է հետևյալ լիցքավորիչներով օգտագործվելու համար. AC-3: Խրոցակի տեսակից կախված՝ լիցքավորիչի մոդելի ստույգ համարը կարող է տարբեր լինել: Խրոցակի տեսակը նույնականացվում է ստորև նշվածներից որևէ մեկով. E, EB, X, AR, U, A, C, K կամ UB:

Մարտկոցը կարելի է հարյուրավոր անգամներ լիցքավորել և լիցքաթափել, բայց ի վերջո այն կենթարկվի բնականոն մաշվածության: Երբ նկատեք, որ խոսակցության և սարքի՝ սպասելու ռեժիմում գտնվելու ժամանակահատվածները սովորականից նկատելիորեն ավելի կարճ են դարձել, ապա փոխեք մարտկոցը: Օգտագործեք միայն այս սարքի համար նախատեսված և Nokia-ի կողմից հաստատված մարտկոցներ ու լիցքավորիչներ դրանք լիցքավորելու համար:

Մարտկոցն առաջին անգամ օգտագործելու կամ երկար ժամանակ չօգտագործելու դեպքում կարող է անհրաժեշտ լինել նախ միացնել լիցքավորիչը, ապա անջատել այն և նորից միացնել՝ մարտկոցի լիցքավորումը սկսելու համար: Եթե մարտկոցը ամբողջովին լիցքաթափված է, կարող է մի քանի րոպե պահանջվել, մինչև լիցքավորման նշանը հայտնվի էկրանին, կամ հնարավոր լինի զանգեր կատարել:

Անվտանգ հանում: Մարտկոցը հանելուց առաջ սարքը միշտ անջատեք և լիցքավորիչից զատեք:

Պատշաճ լիցքավորում: Երբ լիցքավորիչը չի օգտագործվում, անջատեք այն հոսանքի վարդակից և սարքից: Ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը լիցքավորիչին միացված մի թողեք, քանի որ գերլիցքավորումը կարող է կրճատել մարտկոցի շահագործման ժամկետը: Չօգտագործվելու դեպքում ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը ժամանակի ընթացքում լիցքաթափվում է:

Խուսափեք ծայրահեղ բարձր կամ ցածր ջերմաստիճաններից: Աշխատեք մարտկոցը պահել 15°C մինչև 25°C (59°F և 77°F) ջերմաստիճանում: Ծայրահեղ բարձր կամ ցածր ջերմաստիճանները նվազեցնում են մարտկոցի հզորությունը և կրճատում շահագործման ժամկետը: Տաք կամ սառը մարտկոցով սարքը կարող է ժամանակավորապես չաշխատել: Մարտկոցի աշխատանքը հատկապես սահմանափակ է զրոյից ցածր ջերմաստիճաններում:

Կարճ միացում մի ստեղծեք: Պատահական կարճ միացում կարող է առաջանալ, եթե մետաղական որևէ իր, օրինակ՝ մետաղադրամ, ամրակ, կամ գրիչ, ուղիղ միացություն ստեղծի մարտկոցի դրական (+) և բացասական (-) հպակների միջև: (Դրանք մարտկոցի վրա մետաղական շերտերի տեսք ունեն): Սա կարող է տեղի ունենալ, օրինակ, երբ դուք պահեստային մարտկոցը գրպանում կամ դրամապանակում եք պահում: Հպակների կարճ միացումը կարող է վնասել մարտկոցը կամ իրը, որը կարճ միացում է առաջացրել:

Թափոնների հեռացում: Մարտկոցը կրակի մեջ մի գցեք, քանի որ այն կարող է պայթել: Մարտկոցները դեն գցելիս գործեք տեղական իրավական ակտերի համաձայն: Եթե հնարավոր է, մարտկոցը հանձնեք՝ նյութերը կրկին օգտագործելու համար: Մարտկոցը դեն մի նետեք որպես կենցաղային աղբ:

Արտահոսք: Էլեմենտները կամ մարտկոցները չպետք է կազմատել, կտրել, բացել, փշրել, ճկել, ծակել կամ կտրատել: Արտահոսքի դեպքում թույլ մի տվեք, որ մարտկոցի հեղուկը մաշկին կամ աչքերին դիպչի: Եթե դա պատահի, վնասված մակերեսներն անմիջապես ջրով լվացեք կամ դիմեք բժշկի օգնությանը:

Վնասվածք: Մարտկոցը չի կարելի ձևափոխել, վերամշակել: Չի կարելի փորձել օտար առարկաներ մտցնել մարտկոցի մեջ, այն ընկղմել ջրի կամ այլ հեղուկների մեջ կամ ենթարկել այդպիսի ազդեցության: Վնասվելու դեպքում մարտկոցները կարող են պայթել:

Ճիշտ գործածում: Մարտկոցն օգտագործեք միայն իր նպատակային նշանակությամբ: Մարտկոցի սխալ օգտագործումը կարող է հրդեհի, պայթյունի կամ այլ վտանգավոր իրադրության պատճառ դառնալ: Եթե սարքը կամ մարտկոցը վայր եք գցել, հատկապես՝ պինդ մակերևույթի վրա, և կարծում եք, որ մարտկոցը վնասվել է, նախքան օգտագործումը շարունակելը այն տարեք սպասարկման կենտրոն՝ զննման համար: Վնասված լիցքավորիչ կամ մարտկոց մի օգտագործեք: Մարտկոցը փոքր երեխաներից հեռու պահեք:

### Nokia մարտկոցի իսկությունը ստուգելու ուղեցույց

Ձեր պաշտպանության համար օգտագործեք միայն Nokia-ի բնօրինակ մարտկոցներ: Համոզված լինելու համար, որ Դուք Nokia-ի բնօրինակ մարտկոց եք ձեռք բերում, այն գնեք Nokia-ի լիազորված սպասարկման կենտրոնից կամ գործակալից և ստուգեք հոլոգրամային պիտակը՝ կատարելով հետևյալ քայլերը.

**Ստուգեք հոլոգրամը**

1 Պիտակի վրայի հոլոգրամը դիտելիս պետք է մի անկյան տակ տեսնեք Nokia ձեռքերը միացնող նշանը, և մեկ այլ անկյան տակ նայելիս՝ Nokia Original Enhancements պատկերանշանը:



2 Հոլոգրամը ձախ, աջ, ներքև և վերև թեքելիս դուք պետք է նրա կողմերի վրա տեսնեք համապատասխանաբար 1, 2, 3 և 4 կետ:



Բոլոր չորս քայլերը հաջողությամբ ավարտելը լիովին չի երաշխավորում մարտկոցի գործարանային լինելու փաստը: Եթե չեք կարող հաստատել մարտկոցի իսկությունը կամ պատճառներ ունեք կասկածելու, որ պիտակի վրա հոլոգրամ ունեցող Ձեր Nokia մարտկոցն իսկական Nokia մարտկոց չէ, խուսափեք այն օգտագործելուց և տարեք Nokia-ի մոտակա լիազոր սպասարկման կենտրոն կամ վաճառքի գործակալի մոտ՝ համապատասխան աջակցություն ստանալու համար:

Գործարանային Nokia մարտկոցների մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝ տե՛ս www.nokia.com/battery:

**Խնամեք Ձեր սարքը**

Ձեր սարքի, մարտկոցի, լիցքավորիչի և լրասարքերի հետ վարվեք խնամքով: Հետևյալ խորհուրդները կօգնեն ուժի մեջ պահել արտադրողի երաշխիքը:

- Սարքը չոր պահեք: Տեղումները, խոնավությունը և հեղուկների բոլոր տեսակները կարող են տարրեր պարունակել, որոնք քայքայում են էլեկտրոնային սխեմաները: Եթե սարքը թրջվել է, մարտկոցը հանեք և սպասեք, մինչև սարքը չորանա:
- Սարքը չի կարելի փոշոտ կամ կեղտոտ վայրերում պահել կամ օգտագործել: Շարժական մասերն ու էլեկտրոնային բաղադրամասերը կարող են վնասվել:
- Սարքը չի կարելի պահել բարձր ջերմաստիճանի պայմաններում: Բարձր ջերմաստիճանները նվազեցնում են սարքի շահագործման ժամկետը, վնասում մարտկոցը, ծռմռում կամ հալեցնում պլաստմասսայե տարրերը:
- Սարքը չի կարելի պահել ցածր ջերմաստիճանի պայմաններում: Երբ սարքը ցածր ջերմաստիճանից տաքանում է մինչև իր բնական ջերմաստիճանը, սարքի ներսում կարող է խոնավություն հավաքվել և վնասել էլեկտրոնային շղթաները:
- Մի փորձեք բացել սարքը այլ կերպ, քան նկարագրված է օգտագործողի ուղեցույցում:
- Չլիազորված փոփոխությունները կարող են վնասել սարքը և խախտել ռադիոսարքերի օգտագործումը կանոնակարգող օրենքները:
- Սարքը վայր մի գցեք, մի ցնցեք, հարվածի մի ենթարկեք: Կոպիտ վերաբերմունքը կարող է կոտրել ներքին տպատախտակները և մեխանիկական բաղադրամասերը:
- Սարքի մակերևույթը մաքրելու համար օգտագործեք միայն փափուկ, մաքուր, չոր շոր:
- Սարքը չի կարելի ներկել: Ներկը կարող է խցանվել շարժական մասերի միջև՝ խափանելով սարքի պատշաճ աշխատանքը:
- Սարքի աշխատանքը բարելավելու նպատակով ժամանակ առ ժամանակ անջատեք սարքը և հանեք մարտկոցը:
- Ձեր սարքը հեռու պահեք մագնիսներից և մագնիսական դաշտերից:

- Կարևոր տվյալներն ապահով պահելու համար դրանք պահեք առնվազն երկու առանձին տեղում, ինչպիսիք են Ձեր սարքը, հիշաքարտը կամ համակարգիչը, կամ գրի առեք կարևոր տեղեկույթները:

**Վերամշակում**

Ձեր օգտագործած էլեկտրոնային արտադրանքները, մարտկոցները և փաթեթավորման նյութերը միշտ վերադարձրեք հատուկ դրանց համար նախատեսված հավաքման կետեր: Այս կերպ Դուք կօգնեք կանխել թափոնների չվերահսկվող հեռացումը և կնպաստեք նյութական պաշարների վերաօգտագործմանը: Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղեկություններ ստանալու և պարզելու համար, թե ինչպես վերամշակել Nokia արտադրանքները, այցելեք www.nokia.com/werecycle կամ, շարժական սարքով՝ nokia.mobi/werecycle:

**Թվային իրավունքների կառավարման մասին**

Սույն սարքից օգտվելիս ենթարկվեք բոլոր օրենքներին և հարգեք տեղական սովորույթները, այլոց անձնական կյանքի անձեռնմխելիությունը և օրինական իրավունքները, ներառյալ հեղինակային իրավունքները: Հեղինակային իրավունքի պաշտպանությունը կարող է կանխել պատկերների, երաժշտության և այլ բովանդակության պատճենումը, փոփոխումը կամ փոխանցումը:

Բովանդակության սեփականատերերը կարող են թվային իրավունքների կառավարման (DRM) զանազան տեխնոլոգիաներ օգտագործել՝ իրենց մտավոր սեփականությունը, ներառյալ հեղինակային իրավունքները պաշտպանելու համար: DRM-ով պաշտպանված բովանդակություն մուտք գործելու համար այս սարքն օգտագործում է տարբեր տեսակի DRM ծրագրակազմեր: Այս սարքով հնարավոր է մուտք գործել բովանդակություն, որը պաշտպանված է WMDRM 10, OMA DRM 1.0, OMA DRM 1.0 forward lock և OMA DRM 2.0. Եթե որոշակի DRM ծրագրակազմ բովանդակությունը չի պաշտպանում, բովանդակության սեփականատերերը կարող են պահանջել, որպեսզի այդ DRM ծրագրակազմով նոր DRM պաշտպանությամբ բովանդակությունից օգտվելու հնարավորությունը դադարեցվի: Դադարեցումը կարող է նաև արգելել Ձեր սարքում արդեն իսկ տեղադրված՝ DRM-ով պաշտպանված բովանդակության վերականգնումը: Այդպիսի DRM ծրագրակազմի դադարեցումը չի ազդում այլ տեսակի DRM-ներով պաշտպանված բովանդակության կամ DRM-ով չպաշտպանված բովանդակության օգտագործման վրա:

Թվային իրավունքների կառավարման (DRM) միջոցով պաշտպանված բովանդակության հետ միասին տրվում է համապատասխան լիցենզիա, որը սահմանում է բովանդակությունից օգտվելու Ձեր իրավունքները:

Հնարավոր է, որ փոխանցման այլ եղանակներ չփոխանցեն լիցենզիաները, որոնց վերականգնումը՝ բովանդակության հետ միասին, անհրաժեշտ է, որպեսզի կարողանաք շարունակել OMA-DRM-ով պաշտպանված բովանդակության օգտագործումը՝ սարքի հիշողության ֆորմատավորումից հետո: Լիցենզիաները վերականգնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև սարքի վրա գտնվող ֆայլերի վնասվելու դեպքում:

Եթե Ձեր սարքի վրա WMDRM-ով պաշտպանված բովանդակություն կա, լիցենզիաներն ու բովանդակությունը կկորչեն սարքի հիշողությունը ֆորմատավորելու դեպքում: Հնարավոր է նաև, որ սարքի վրա գտնվող ֆայլերի վնասման հետևանքով կորցնեք լիցենզիաներն ու բովանդակությունը: Լիցենզիաների կամ բովանդակության կորուստը կարող է սահմանափակել Ձեր սարքի վրա նույն բովանդակությունից նորից օգտվելու հնարավորությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ծառայություն մատուցողին:

Որոշ լիցենզիաներ կարող են միացված լինել հատուկ SIM քարտի, և պաշտպանված բովանդակությունից հնարավոր կլինի օգտվել միայն այն դեպքում, երբ տվյալ SIM քարտը մտցված լինի սարքի մեջ:

**Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ**

Սույն սարքի մակերևույթը նիկել չի պարունակում:

**Փոքր երեխաներ**

Ձեր սարքը կամ իր լրասարքերը խաղալիք չեն: Դրանք կարող են փոքր մասեր պարունակել: Դրանք փոքր երեխաներից հեռու պահեք:

**Գործարկման միջավայրը**

Սույն սարքը բավարարում է ՌՀ ճառագայթման պահանջներին, երբ օգտագործվում է նորմալ դիրքում՝ ականջի մոտ, կամ երբ տեղակայված է մարմնից առնվազն 1.5 սանտիմետր (5/8 դյույմ) հեռավորության վրա: Տեղափոխման պայուսակը, գոտու ամրակը կամ սարքը մարմնի վրա շահագործելու համար նախատեսված որևէ կրիչ չպետք է մետաղ պարունակի և պետք է սարքը մարմնից նշված հեռավորության վրա պահի:

Տվյալներ պարունակող ֆայլեր կամ հաղորդագրություններ ուղարկելը ցանցի հետ որակյալ կապ է պահանջում: Տվյալների ֆայլերի կամ հաղորդագրությունների ուղարկումը կարող է հետաձգվել, մինչև այդպիսի կապը առկա լինի: Մինչև տվյալների փոխանցման ավարտը կատարեք հեռավորությանը վերաբերող հրահանգները:

Սարքի մասերը մագնիսական հատկություններ ունեն: Մետաղական մասերը կարող են ձգվել դեպի սարքը: Վարկային քարտեր կամ մագնիսական պահեստավորման այլ հարմարանքներ չի կարելի սարքի մոտակայքում տեղադրել, քանի որ դրանց վրա գրանցված տեղեկությունները կարող են ջնջվել:

**Բժշկական սարքավորումներ**

Ռադիոհաղորդիչ սարքավորման աշխատանքը՝ ներառյալ անլար հեռախոսները, կարող է խանգարել բավարար պաշտպանություն չունեցող բժշկական սարքերի աշխատանքին: Խորհրդակցեք բժշկի կամ բժշկական սարքավորման արտադրողի հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք այդ սարքերը բավարար պաշտպանություն ունեն ռադիոհաճախության արտաքին էներգիայից: Անջատե՛ք Ձեր սարքը, եթե փակցված կանոնները հրահանգում են այդպես վարվել: Հնարավոր է, որ հիվանդանոցներն ու առողջապահական հաստատությունները ռադիոհաճախության արտաքին էներգիայի նկատմամբ զգայուն սարքավորումներ օգտագործեն:

**Իոնային ներկալման եղանակով պատրաստված բժշկական սարքավորումներ**

Բժշկական սարքավորումներ արտադրողները խորհուրդ են տալիս առնվազն 15.3 սանտիմետր (6 դյույմ) տարածություն պահպանել անլար սարքի և փոխպատվաստված բժշկական սարքավորումների միջև (ինչպիսիք են սրտի ռիթմավարը կամ սրտամկանի թելիկախաղը վերացնող էլեկտրական սարքը)՝ բժշկական սարքի աշխատանքի հնարավոր խաթարումից խուսափելու համար: Այդպիսի սարքավորումներ կրող անձինք պետք է.

- Անլար սարքը միշտ ավելի քան 15.3 սանտիմետր (6 դյույմ) հեռու պահեն բժշկական սարքից:
- Սարքը չպահեն ծոցագրպանում:
- Անլար սարքը պահեն բժշկական սարքավորման նկատմամբ հակառակ ականջի մոտ:
- Անջատեն անլար սարքը, եթե այդպիսի ազդեցության առկայությունը ենթադրելու հիմքեր կան:
- Հետևեն արտադրողի՝ փոխպատվաստված բժշկական սարքավորման վերաբերյալ ցուցումներին:

Ձեր անլար սարքը բժշկական սարքավորման հետ օգտագործելու վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խորհրդակցեք Ձեզ բժշկական ծառայություններ մատուցող անձի հետ:

**Լսողական օժանդակ սարքեր**

Թվային անլար որոշ սարքեր կարող են խանգարել որոշ լսողական օժանդակ սարքերի աշխատանքին:

**Ավտոմեքենաներ**

Ռադիոհաճախության ազդանշանները կարող են ազդել ավտոմեքենաներում սխալ տեղակայված կամ ոչ պատշաճ կերպով պաշտպանված էլեկտրոնային համակարգերի վրա (վառելիքի էլեկտրոնային ներարկման, էլեկտրոնային հակախաթարման արգելակային, արագության կառավարման էլեկտրոնային և անվտանգության բարձիկների համակարգեր): Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր մեքենայի կամ սարքավորանքի արտադրողին:

Միայն որակավորված անձնակազմը պետք է սպասարկի սարքավորումները կամ դրանք տեղադրի ավտոմեքենայի մեջ: Սխալ տեղադրումը կամ սպասարկումը կարող է վտանգավոր լինել և անվավեր դարձնել սարքի երաշխիքը: Պարբերաբար ստուգեք, որ Ձեր ավտոմեքենայում տեղադրված անլար բոլոր սարքավորումները պատշաճորեն ամրացված և սարքին լինեն: Սարքի, դրա մասերի կամ լրասարքերի հետ նույն խցիկում չի կարելի դյուրավառ հեղուկներ, գազեր կամ պայթուցիկ նյութեր պահել: Հիշեք, որ անվտանգության բարձիկները մեծ ուժով են փչվում: Ձեր սարքը կամ լրասարքերը մի՛ տեղադրեք անվտանգության բարձիկի բացման տարածքում:

Անջատեք Ձեր սարքը օդանավ բարձրանալուց առաջ: Օդանավում անլար հեռահաղորդակցության սարքերի օգտագործումը կարող է օդանավի աշխատանքի համար վտանգ ներկայացնել և հակաիրավական լինել:

**Հնարավոր պայթյունավտանգ միջավայրեր**

Սարքն անջատեք հնարավոր պայթյունավտանգ միջավայրերում: Հետևեք բոլոր փակցված հրահանգներին: Նման վայրերում կայծը կարող է պայթյունի կամ հրդեհի հանգեցնել, ինչը կարող է պատճառել մարմնական վնասվածքներ և մահ: Սարքն անջատեք վառելիքի լցակայաններում: Հետևեք սահմանափակումներին վառելանյութի պահեստավորման և բաշխման վայրերում, քիմիական գործարաններում կամ այն վայրերում, որտեղ պայթեցման աշխատանքներ են կատարվում: Հնարավոր պայթյունավտանգ միջավայր ունեցող տարածքները սովորաբար, բայց ոչ միշտ, հստակորեն նշված են լինում: Դրանք ներառում են այն վայրերը, որտեղ խորհուրդ է տրվում ավտոմեքենայի շարժիչն անջատել, ինչպես նաև նավերում տախտակամածի տակ գտնվող տարածքները, քիմիական նյութերի տեղափոխման կամ պահեստավորման վայրերն ու այն տարածքները, որտեղ օդը պարունակում է քիմիական նյութեր կամ մասնիկներ, ինչպիսիք են ավազահատիկը, փոշին կամ մետաղափոշին: Դուք պետք է ստուգեք հեղուկ գազով (օրինակ՝ պրոպանով կամ բութանով) աշխատող ավտոմեքենաներ արտադրողների հետ, թե արդյո՞ք այս սարքը կարելի է անվտանգ օգտագործել դրանց մոտակայքում:

**Արտակարգ իրավիճակների հեռախոսազանգեր**

**Կարևոր է.** Սույն սարքը գործում է ռադիոազդանշանների, անլար և փիքսված հեռախոսացանցերի, ինչպես նաև օգտագործողի կողմից ծրագրավորվող գործառույթների միջոցով: Եթե Ձեր սարքն ինտերնետով ձայնային կանչի հնարավորություն է տալիս (ինտերնետային զանգեր), ակտիվացրեք և՛ ինտերնետային զանգերը, և՛ բջջային հեռախոսը: Եթե երկուսն էլ ակտիվացված են, ապա հնարավոր է, որ սարքը փորձի արտակարգ իրավիճակների կանչ կատարել և՛ բջջային ցանցի, և՛ Ձեզ ինտերնետային կանչի ծառայություններ տրամադրողի միջոցով: Բոլոր դեպքերում չէ, որ միացումները կարող են երաշխավորված լինել: Կարևոր դեպքերում, օրինակ՝ բժշկական շտապօգնություն կանչելու անհրաժեշտության դեպքում, չի կարելի հույսն ամբողջովին անլար սարքի օգտագործման վրա դնել:

Արտակարգ իրավիճակներում զանգահարելու համար հարկավոր է անել հետևյալը.

1 Երբ սարքը միացված չէ, միացրեք այն։ Համոզվեք, որ ազդանշանի հզորությունը բավարար է։ Ձեր սարքից կախված՝ գուցե կարիք լինի կատարել հետևյալը.

- Մտցրեք SIM քարտը, եթե սարքն այդպիսի քարտ օգտագործում է։
- Վերացրեք կանչերի վրա դրված որոշ սահմանափակումներ, որոնք ակտիվացրել եք Ձեր սարքում։
- Փոխեք սարքի աշխատանքային ռեժիմը՝ օֆլայն կամ թռիչքային ռեժիմից անցնելով ակտիվ ռեժիմի։

2 Սեղմեք «Վերջ» ստեղնը այնքան անգամ, որքան անհրաժեշտ է էկրանը մաքրելու և սարքը հեռախոսազանգ կատարելու համար պատրաստ վիճակի բերելու համար։

3 Մուտքագրեք Ձեր գտնվելու վայրի՝ արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարը։ Արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնների համարները կարող են, գտնվելու վայրից կախված, տարբեր լինել։

4 Սեղմեք զանգահարելու ստեղնը։

Արտակարգ իրավիճակների հեռախոսազանգի ժամանակ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները հնարավորինս ճշգրիտ հաղորդեք։ Հնարավոր է, որ դեպքի վայրում Ձեր անլար սարքը կապի միակ միջոցը լինի։ Հեռախոսազանգը մի ընդհատեք մինչև թույլտվություն չստանաք։

**Տեղեկություններ հավաստագրման մասին (SAR)**

**Սույն շարժական սարքը համապատասխանում է ռադիոճառագայթմանը վերաբերող ուղեցույցներին**

Ձեր շարժական սարքը ռադիոհաղորդիչ և ընդունիչ սարք է։ Այն նախագծված է այնպես, որպեսզի չգերազանցի ռադիոճառագայթների ազդեցության միջազգային ուղեցույցներով սահմանված սահմանափակումները։ Այդ ուղեցույցները մշակվել են ICNIRP անկախ գիտական կազմակերպության կողմից և ներառում են այն թույլատրելի սահմանները, որոնք մշակված են բոլոր մարդկանց պաշտպանվածությունը ապահովելու համար՝ անկախ նրանց տարիքից կամ առողջական վիճակից։

Ռադիոճառագայթմանն առնչվող ուղեցույցները շարժական սարքերի համար օգտագործում են կլանման տեսակարար կշիռ (ԿՏԿ կամ SAR) կոչվող չափման միավորը։ ICNIRP ուղեցույցում նշված SAR-ի սահմանային արժեքը միջինացված հյուսվածքային 10 գրամի վրա կազմում է 2.0 վատտ/կիլոգրամ (Վտ/կգ)։ SAR-ի չափման փորձերը կատարվել են օգտագործման ստանդարտ դիրքում, երբ սարքը հաղորդում է հաստատված ամենաբարձր հզորության մակարդակով՝ ստուգվող բոլոր հաճախությունների տիրույթներում։ Գործող սարքի իրական SAR-ի մակարդակը կարող է առավելագույն արժեքից ցածր լինել, քանի որ այն նախագծված է այնպես, որ օգտագործի ցանցին միանալու համար անհրաժեշտ հզորությունը միայն։ Այս արժեքը փոփոխվում է մի շարք գործոններից կախված, մասնավորապես՝ այն բանից, թե ցանցի հաղորդակայանից ինչ հեռավորության վրա եք գտնվում։

Համաձայն ICNIRP ուղեցույցի՝ սարքը ականջի մոտ օգտագործելու դեպքում SAR-ի առավելագույն արժեքը չպետք է գերազանցի 0.80 Վտ/կգ։

Լրասարքերի օգտագործումը կարող է SAR-ի տարբեր արժեքների հանգեցնել։ SAR-ի արժեքները կարող են տարբեր լինել՝ կախված հաշվետվությունների և չափումների ազգային պահանջներից և ցանցի հաճախականության տիրույթից։ SAR-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող են տրամադրվել www.nokia.com ինտերնետային կայքում՝ համապատասխան արտադրանքի տեղեկատվական էջում։

# Հեղինակային իրավունք և այլ ծանուցումներ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

CE 0434

NOKIA CORPORATION-ը սույնով հայտարարում է, որ սույն RM-586 արտադրատեսակը համապատասխանում է 1999/5/EC դիրեկտիվի հիմնական պահանջներին և կիրառելի այլ դրույթների։ Համապատասխանության հայտարարագրին կարելի է ծանոթանալ http://www.nokia.com/phones/declaration_of_conformity/ ինտերնետային էջում։

© 2010 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են։

Nokia, Nokia Connecting People և Navi նշանները Nokia Corporation-ի ապրանքային կամ գրանցված ապրանքային նշաններն են։ Nokia tune ձայնային ազդանշանը Nokia Corporation-ի ձայնային նշանն է։ Սույն փաստաթղթում հիշատակվող ապրանքային կամ ֆիրմային այլ անվանումներ կարող են հանդիսանալ դրանց համապատասխան սեփականատերերի ապրանքային նշանները։

Արգելվում է սույն փաստաթղթի բովանդակության՝ որևէ եղանակով կատարված ամբողջական կամ մասնակի վերարտադրությունը, փոխանցումը, տարածումը կամ պահեստավորումը՝ առանց Nokia-ից նախօրոք ստացված գրավոր թույլատվության։ Nokia-ն անընդհատ կատարելագործման

քաղաքականություն է վարում: Nokia-ն իրավունք է վերապահում, առանց նախօրոք ծանուցելու, փոփոխություններ և բարելավումներ կատարել սույն փաստաթղթում նկարագրված որևէ արտադրանքի մեջ:

Includes RSA BSAFE cryptographic or security protocol software from RSA Security.

Java and all Java-based marks are trademarks or registered trademarks of Sun Microsystems, Inc.

Սույն արտադրանքը լիցենզավորված է MPEG-4 Visual Patent Portfolio License-ով` (i) MPEG-4 Visual Standard-ին համապատասխան կոդավորված տեղեկատվությունը անձնական և ոչ առևտրային գործունեության մեջ ներգրավված սպառողի կողմից անձնական և ոչ առևտրային նպատակով օգտագործման և (ii) լիցենզավորված մատակարարողից ստացված MPEG-4 տեսանյութերի առնչությամբ օգտագործման համար: Որևէ այլ օգտագործման համար լիցենզիա` ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չի տրամադրվում: Լրացուցիչ տեղեկություններ, ներառյալ գովազդային, ներքին և առևտրային նպատակներով օգտագործումը, կարող են ձեռք բերվել MPEG LA, LLC-ից: Տես` http://www.mpegla.com.

ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ NOKIA-Ն ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԼԻՑԵՆԶԱՏՈՒՆԵՐԸ ՈՉ ՄԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ԿՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՏԻ ԿՈՐՍՏԻ, ԻՐԱԿԱՆ, ԿՈՂՄՆԱԿԻ, ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԻՆՉ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԷԼ ՈՐ ԴՐԱՆՔ ՊԱՏՃԱՌՎԱԾ ԼԻՆԵՆ:

ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է «ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱ»: ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՃՇԳՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՄԻ ԵՐԱՇԽԻՔ՝ ԼԻՆԻ ԴԱ ՊՈԶԻՏԻՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ, ԹԵ՝ ԵՆԹԱԴՐՅԱԼ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԲԱՅՑ ՈՉ ՄԻԱՅՆ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ) ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ, ԵԹԵ ՕՐԵՆՔՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ: NOKIA-Ն ԻՐԱՎՈՒՆՔ Է ՎԵՐԱՊԱՀՈՒՄ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԻ ՓՈՓՈԽԵԼ ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԱՄ ՀԵՏ ԿԱՆՉԵԼ ԱՅՆ՝ ԱՌԱՆՑ ՆԱԽՕՐՈՔ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ:

Սույն արտադրանքին վերաբերող առանձին սարքերի, ծրագրային ապահովման և ծառայությունների առկայությունը կարող է տարբերվել՝ տարածաշրջանից կախված: Լեզվային տարբերակների առկայության և մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար դիմեք Nokia-ի գործակալին: Սույն սարքը կարող է պարունակել նյութեր, տեխնոլոգիաներ կամ ծրագրեր, որոնց վրա տարածվում են ԱՄՆ կամ այլ երկրների արտահանման օրենքները կամ կանոնակարգերը: Օրենքին հակասող շեղումները արգելված են:

Ձեր սարքի հետ տրամադրվող երրորդ անձանց պատկանող ծրագրերը կարող են ստեղծված լինել և պատկանել Nokia-ի հետ փոխկապակցված կամ կապված անձ չհամարվող անձանց կամ կազմակերպություններին: Երրորդ անձանց ծրագրերի նկատմամբ հեղինակային կամ մտավոր սեփականության իրավունքները Nokia-ին չեն պատկանում: Ուստի, Nokia-ն պատասխանատվություն չի կրում այդ ծրագրերի աշխատանքի, օգտագործողին՝ դրանց հետ կապված օժանդակություն մատուցելու, կամ դրանց մեջ պարունակվող տեղեկատվության համար: Nokia-ն երրորդ անձանց պատկանող ծրագրերի համար որևէ երաշխիք չի տրամադրում:

ԾՐԱԳՐԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՎ՝ ԴՈՒՔ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ԱՅԴ ԾՐԱԳՐԵՐԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՀԻՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿՈՒՄ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ԵՐԱՇԽԻՔԻ՝ ԲԱՑԱՀԱՅՏ ԿԱՄ ԵՆԹԱԴՐՅԱԼ, ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ԴՈՒՔ ՆԱԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՔ, ՈՐ NOKIA-Ն ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԲԱՑԱՀԱՅՏ ԿԱՄ ԵՆԹԱԴՐՅԱԼ ՈՉ ՄԻ ԵՐԱՇԽԻՔ ԿԱՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ, ԲԱՅՑ ՈՉ ՄԻԱՅՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ, ՎԱՃԱՌՔԻ ԿԱՄ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆԸ, ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ, ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՉԽԱԽՏԵԼՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՈՒ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

ՀԴՀ/«ԻՆԴԸՍՏՐԻ ԿԱՆԱԴԱ» ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ձեր սարքը կարող է առաջացնել հեռուստա- կամ ռադիոխանգարումներ (օրինակ, հեռախոսն ընդունիչ սարքավորման անմիջական մոտակայքում օգտագործելիս): Ինդըստրի Կանադան կամ ՀԴՀ-ն կարող են պահանջել Ձեզանից դադարեցնել հեռախոսի օգտագործումը, եթե այդ խանգարումները հնարավոր չէ վերացնել: Օգնության կարիքի դեպքում, դիմեք տեղական սպասարկման կետ: Սույն սարքը համապատասխանում է ՀԴՀ կանոնակարգի 15-րդ բաժնի պահանջներին: Սարքը շահագործելիս պետք է նկատի ունենալ հետևյալը. (1) սույն սարքը չի կարող առաջացնել վնասակար հեռահաղորդակցային խանգարումներ, և (2) սույն սարքն ընդունում է ստացված բոլոր խանգարումները, ներառյալ այնպիսիք, որոնք կարող են հանգեցնել անցանկալի գործողությունների: Որևէ փոփոխություն կամ ձևափոխում, որը կատարվել է առանց Nokia-ի ուղղակի հավանության, կարող է անվավեր դարձնել օգտագործողի կողմից սույն սարքը շահագործելու իրավունքը:

Հրատարակություն 3 HY

# Ցուցիչ


## Պայմանանշաններ կամ թվեր

Bluetooth 20
microSD քարտ 5
Nokia աջակցության տեղեկություններ 5
PIN կոդ 10
SIM քարտ 5, 11
USB միացում 8

## Ա

ազդանշանի հզորության ցուցիչ 10
ականջակալ 8
ամսաթիվ և ժամ 19
այցեքարտեր 17
անելիքների ցանկ 23
անվտանգության կոդ 10
աջակցություն 5
արագ համարահավաք 12

## Գ

գործարանային պարամետրեր 22

## Դ

դյուրանցումներ 19

## Զ

զննարկիչ 31

## Է

էլփոստ 16

## Ը

ընտրացանկեր 13

## Թ

թվային ռեժիմ 12

## Ի

ինտերնետ 31

## Լ

լրասարքեր 21

## Խ

խաղեր 23
խցիկ 24

## Ծ

ծրագրեր 22

## Կ

կաբելի միացում 8
կազմաձևում 21
կանչեր 11
կանչերի գրանցամատյան 18
կոնտակտներ 17

## Հ

հաղորդագրության պարամետրեր 17
հաղորդագրություններ 15
հաղորդագրությունների կենտրոնի համարը 14
համաժամացում 19
համացանց 31
հավելյալ 23
հիշաքարտ 5
հնչերանգներ 18

## Ձ

ձայնագրանցիչ 25
ձայնային հաղորդագրություններ 15, 17

## Մ

մարտկոց 5
— լիցքավորվում է 6
մարտկոցի լիցքավորման մակարդակի ցուցիչ 10
մեդիա նվագարկիչ 25
մուտքի կոդեր 10

## Ն

նամակներ 16
նշանաբառեր 10

## Շ

շտապ հաղորդագրություններ 15

## Պ


Պատկերասրահ 22
պատկերի ռեժիմ 24
պարամետրեր 18
— հեռախոս 21
պարամետրեր, ցուցադրել 19
պրոֆիլներ 18


## Ս


սարքը միացնելը/անջատելը 10
սարքի սնուցումը միացնելը/անջատելը 10
ստեղնախմբի կողպեք 11
ստեղնակողպեք 11
ստեղներ 9


## Տ


տեսագրման ռեժիմ 24
տեքստ մուտքագրելը 12
տեքստային հաղորդագրություններ 14
տեքստային ռեժիմներ 12
տեքստերի ավանդական ներմուծում 13
տեքստերի կանխատեսող ներմուծում 13
տվյալների կրկնօրինակում 19


## Ց


ցուցասարքի պարամետրեր 19
ցուցիչներ 10


## Փ


փոստ 16


## Ք


Քարտեզներ 26
— GPS ընդունիչ 28
— երթուղիներ 28
— նավարկում 29, 30
— տեղորոշում 27


## Օ


օպերատորի ընտրացանկ 22
օրացույց 23
օֆլայն պրոֆիլ 11